



Հայաստանի Հանրապետության
Առևտրի և Տնտեսական
Զարգացման նախարարություն



Միացյալ Ազգերի Կազմակերպության
Զարգացման Ծրագրի
Հայաստանյան Գրասենյակ

ՀԱՅԵՑԱԿԱՐԳԱՅԻՆ ՓԱՍՏԱԹՈՒՂԹ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԿԱՅՈՒՆ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

Մշակված է “Հայաստանի Կայուն Տնտեսական Զարգացման
Քաղաքականություն” ծրագրի շրջանակներում

ԵՐԵՎԱՆ 2003

Բովանդակություն

Ներածություն	2
Ծրագրի նպատակը և գերակայությունները	3
Տնտեսական զարգացման և սոցիալ – տնտեսական քաղաքականության զարգացման վերլուծությունը 1994-2002թթ. համա	5
Համաշխարհային տնտեսության հիմնական միտումները	134
Տնտեսական աճի տիպի փոփոխության և զարգացման նոր ռազմավարության ընտրության պրոբլեմը.....	235
Արտահանման վրա հիմնված աճը և ինովացիոն զարգացումը.....	279
Հայաստանի Կայուն Տնտեսական Զարգացման Քաղաքականության ծրագրի կառուցվածքը.....	34

Սույն հայեցակարգը մշակված է «Հայաստանի Կայուն Տնտեսական Աճի Քաղաքականություն» ծրագրի (հետագայում՝ Ծրագիր) շրջանակներում և առաջադրում է այն հիմնական սկզբունքները և մեթոդաբանական շրջանակը որոնց հիման վրա պետք է մշակվի ծրագիրը:

Ծրագրի մշակման անհարժեշտությունը թելադրված է մի շարք իրողություններով.

- անցումնային ժամանակաշրջանի հիմնաախնդիրները՝ կայուն մակրոտնտեսական միջավայրի հաստատումը առևտրի և գների ազատականացումը մասնավորեցումը և շուկայամետ տնտեսության օրենսդրական և ինստիտուցիոնալ հենքի ձևավորումը գերազանցապես հաղթահարված են
- զարգացող երկրների և հատկապես անցումնային երկրների փորձը վկայում է որ մասնավոր հատվածի գերակշռությունը բարենպաստ մակրոտնտեսական և ազատական օրենսդրական միջավայրը երկարաժամկետ տնտեսական աճի սոսկ անհրաժեշտ բայց ոչ բավարար նախապայմաններ են
- վերջին տարիների տնտեսական աճը պայմանավորող մի շարք նշանակալից գործոններ մասնավորապես՝ արտաքին պետական և մասնավոր տրանսֆերտներ եղած հզորությունների օգտագործման աստիճանի ավելացում և ներմուծման փոխարինում հեռանկարում չեն կարող պահպանել իրենց ազդեցությունը
- չնայած արտահանման և ներդրումների բնագավառում վերջին տարիների զգալի հաջողություններին դրանց մակարդակը կառուցվածքը և միտումները գոհացուցիչ չեն կարող համարվել

Ծրագրի մշակման նպատակահարմարությունը հիմնավորվում է նաև այն հանգամանքով որ չնայած ներկայումս կառավարության կողմից իրականացվող և նախանշված մի շարք ծրագրերում մասնավորապես՝ ԱՀՌԾ ՄԺԾԾ SAC V և PRGF այս կամ այն չափով արժարժվում են ստնտեսական աճի խնիիրները այնուհանդերձ կողմնորոշվածության ժամկետայնության և վերժանման աստիճանով դրանք չեն կարող և չեն համապատասխանում տնտեսական աճի երկարաժամկետ ռազմավարության ուղեգծմանը նպատակադրված ծրագրին ներկայցվող պահանջներին: Այս տեսանկյունից առավել կարևոր է որ ապագա ծրագիրը դիտարկվի և մշակվի ոչ թե ի հակադրություն այլ ի լրացում ներկայումս երկրի սոցիալ-տնտեսական զարգացման տարբեր բնագավառներին վերաբերվող առավել ընդհանրական գործող ծրագրերին:

Հայեցակարգի առաջին գլուխը նվիրված է ապագա ծրագրի նպատակադրմանը:

Այստեղ ներկայացված են ծրագրի հիմնական՝ որակական նպատակը հիմնական նպատակի քանակական վերժանումը ինչպես նաև այն գերակայությունները որոնք պետք է ենթադասվեն ծրագրի հիմնական նպատակին: Երկրորդ գլուխը նվիրված է 1990-2002թթ տնտեսական վայրընթացների և վերընթացների գործոնային վերլուծությանը հատուկ ուշադրություն դարձնելով այն գործոններին որոնք նպաստել են 1994 թվականից շարունակվող տնտեսական աճին: Գլուխը տնտեսության վերլուծությունը ներկայացված է երրորդ գլխում և նպատակ ունի վերհանել տեսանելի ապագայում սպասվող հնարավոր կառուցվածքային փոփոխությունները: Հաջորդ երկու գլուխներում վերլուծված են Հայաստանի տնտեսության ուժեղ և թույլ կողմերը ինչպես նաև փորձ է արված առաջադրել ապագա ծրագրի մշակման հիմնական սկզբունքները: Եզրափակիչ գլխով առաջադրված է Հայաստանի կայուն տնտեսական զարգացման ռազմավարության ծրագրի կառուցվածքը:

ԾՐԱԳՐԻ ՆՊԱՏԱԿՆԵՐԸ ԵՎ ԳԵՐԱԿԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

1. Հիմնական նպատակը՝ երկարաժամկետ զարգացման հիմնական որակական նպատակն է մաքսիմալ կարճատև ժամանակահատվածում (օրինակ մի սերնդի կյանքի տևողությունը) անցումը աղքատ երկրների կատեգորիայից զարգացած երկրների կատեգորիային:

2. Այդ նպատակը կարող է բաժանվել մի շարք քանակապես գնահատվող ենթանպատակների որոնցից կարևորագույնը կարելի է ձևակերպել այսպես. երկարաժամկետ հեռանկարում տնտեսական աճի կայուն տեմպերի ապահովումը որպես հիմք բնակչության կենսամակարդակի

բարելավման աղքատության կրճատման սոցիալական զարգացման համար:

3. Մյուս համակարգային տնտեսական և սոցիալական նպատակները ինչպիսիք են աղքատության և անհավասարության վերացումը սոցիալական ոլորտի զարգացումը եկամուտների կանոնակարգման քաղաքականությունը այլն անհրաժեշտ է ստորակարգել (սուբորդինացնել) տնտեսական աճի երկարաժամկետ տեմպերը առավելագույնի հասցնելու նպատակով: Դա մի կողմից նշանակում է այդ ոլորտներում քաղաքականության փոփոխությունները պետք է կատարվեն տնտեսական զարգացման տեմպերի վրա հնարավոր ազդեցությունները հաշվի առնելով իսկ մյուս կողմից դրանք առանց ծայրահեղ անհրաժեշտության (համակարգային

Ներդիր 1. Տնտեսական աճի քանակական նպատակադրումը

ՀՆԱ-ի աճի միջին տեմպի պահպանումը տարեկան 6%-ի մակարդակում կապահովի ՀՆԱ-ի կրկնապատկումը յուրաքանչյուր 12 տարում¹ 7%-ի մակարդակում՝ յուրաքանչյուր 10.5 տարում 8%-ի մակարդակում՝ յուրաքանչյուր 9 տարում: Ընդ որում ելնելով 1999-2001թթ.¹ աղքատության կրճատման դինամիկայի պահպանումից 6% աճի տեմպի դեպքում աղքատության մակարդակը 12 տարի հետո կկազմի 25.3 տոկոս 7% աճի տեմպի դեպքում՝ 19.2 տոկոս իսկ 8% աճի տեմպի դեպքում՝ 12.5 տոկոս 2001թ. 50.9%-ի համեմատ: Մյուս կողմից դոլարի համեմատ հայկական դրամի գնողունակության համարժեքությունը հաշվի առնելու և այդ հարաբերակցության և բնակչության թվի անփոփոխ արժեքներ ընդունելու դեպքում բնակչության մեկ շնչին ընկնող ՀՆԱ-ն 12 տարի հետո 6%-ի աճի դեպքում կկազմի 5030 դոլար կամ ԱՄՆ բնակչության մեկ շնչին ընկնող ՀՆԱ-ի 15.8%-ի չափով 7% աճի տեմպի դեպքում՝ 5630 դոլար կամ 17.6% իսկ 8% աճի տեմպի դեպքում՝ 6300 դոլար կամ 19.7%-ը (ըստ 1999թ. ԱՄՆ բնակչության տվյալների): 20 տարի անց այդ թվերը կկազմեն համապատասխանաբար 8000 դոլար կամ 25%՝ 6% աճի տեմպի դեպքում 9700 դոլար կամ 30.4%՝ 7% աճի տեմպի դեպքում և 11650 դոլար կամ 36.5%՝ 8% աճի տեմպի դեպքում:

2001թ. Հայաստանում ՀՆԱ-ն գնողունակության համարժեքությունը (ԳՀ) հաշվի առնելու դեպքում (որն ըստ Հայաստանի Ազգային վիճակագրական ծառայության տվյալների հավասար է 3.378³) կազմել է 2500 դոլար բնակչության մեկ շնչի հաշվով⁴ կամ 1999թ. ԱՄՆ-ում բնակչության մեկ շնչին ընկնող ՀՆԱ-ի 7.8%-ը: Եթե հաշվի առնենք որ ԱՄՆ-ում բնակչության մեկ շնչին ընկնող ՀՆԱ-ի աճի տեմպերը կազմում են տարեկան 2%⁵ այդ հարաբերակցությունը 20 տարի հետո աճի տեմպի 6%-ի դեպքում կկազմի 16.2 տոկոս աճի տեմպի 7%-ի դեպքում՝ 19.6 տոկոս իսկ 8% աճի տեմպի դեպքում՝ 23.6%: Երկարաժամկետ պլանում աճի նման բարձր տեմպերը տեսականորեն և գործնականորեն հնարավոր են: Այսպես ըստ World Development Indicators 2001⁶ 6%-ից բարձր միջին տեմպեր 1965-1999թթ. ունեցել են Բոտսվանան՝ 10.6% (ԳՀ-ն բնակչության մեկ շնչի հաշվով ԳՀ-ն հաշվի առնելու դեպքում 1999թ.՝ 3550 դոլար) Չինաստանը՝ 8.1% (ՀՆԱ-ն բնակչության մեկ շնչի հաշվով ԳՀ-ն հաշվի առնելու դեպքում 1999թ.՝ 3550 դոլար) Հոնկոնգը՝ 7.3% (ՀՆԱ-ն բնակչության մեկ շնչի հաշվով ԳՀ-ն հաշվի առնելու դեպքում 1999թ.՝ 22570 դոլար) Ինդոնեզիան՝ 6.9% Հարավային Կորեան՝ 8.1% (ՀՆԱ-ն բնակչության մեկ շնչի հաշվով ԳՀ-ն հաշվի առնելու դեպքում 1999թ.՝ 15530 դոլար) Մալազիան՝ 7% (ՀՆԱ-ն բնակչության մեկ շնչի հաշվով ԳՀ-ն հաշվի առնելու դեպքում 1999թ.՝ 7640 դոլար) Օմանը՝ 9.5% Սինգապուրը՝ 8.3% (ՀՆԱ-ն բնակչության մեկ շնչի հաշվով ԳՀ-ն հաշվի առնելու դեպքում 1999թ.՝ 22310 դոլար) Թաիլանդը՝ 7.3% (ՀՆԱ-ն բնակչության մեկ շնչի հաշվով ԳՀ-ն հաշվի առնելու դեպքում 1999թ.՝ 5950 դոլար) նույն ժամանակահատվածում զարգացած երկրներում աճի տեմպերի 3.2%-ի համեմատ: Եթե հաշվի առնենք 2002թ. Հայաստանում ենթադրվող տնտեսական աճը 12.2%-ի ծավալով⁷ ապա տնտեսական աճի միջին տեմպը 1994-2002թթ. կկազմի 6.6% որը սկզբունքորեն դնում է նրան նշված երկրների շարքում:

և որ

ճգնաժամը զինված հակամարտությունների մեջ ներքաշվելը բնական աղետները և այլն) չպետք է փոխեն Հայաստանում արդեն ձևավորված տնտեսական համակարգի հիմքերը՝ բաց տնտեսությունը ֆինանսական և արտաքին առևտրի կարգավորման ազատական համակարգերը գների կենտրոնացված կարգավորման բացակայությունը ցածր ինֆլյացիայի և մակրոտնտեսական կայունության քաղաքականությունը և այլն:

4. Հասարակական - քաղաքական զարգացման նպատակները ինչպիսիք են հասարակության կառավարման դեմոկրատական մեխանիզմների զարգացումը մարդու և սեփականության իրավունքների պաշտպանությունը իշխանությունների հաշվետվությունը

հասարակությանը իշխանությունների նշանակումը և փոփոխությունը ազատ ընտրությունների միջոցով անկախ դատական համակարգը զանգվածային լրատվամիջոցների անկախությունը քաղաքացիական հասարակության ինստիտուտների կառուցումը և զարգացումը հակակոռուպցիոն քաղաքականությունը և այլն նպատակահարմար է դիտարկել մի կողմից որպես տնտեսական զարգացման արտաքին սահմանափակումներ կամ պայմաններ իսկ մյուս կողմից՝ որպես հասարակական պահանջմունքներ որոնց ինտենսիվությունը պայմանավորված է տնտեսական զարգացմամբ և զգալիորեն կաճի վերջինիս ընթացքում: Նշված կառուցվածքները ճանաչված և անհրաժեշտ արժեքներ են: Վերջիններս ապահովող ինստիտուտները արևմտյան տիպի քաղաքականության հիմքերն են: Մեր կարծիքով արևմտյան քաղաքականությունը իր տեսակով շատ ավելի մոտ է հայ ժողովրդին և մեր միակ և բնական ընտրությունն է ներկայումս աշխարհում գոյություն ունեցող հասարակության կազմակերպման ձևերի մեջ⁶:

ՏՆՏԵՍԱԿԱՆ ՉԱՐԳԱՅՄԱՆ և ՍՈՑԻԱԼ – ՏՆՏԵՍԱԿԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՉԱՐԳԱՅՄԱՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆԸ 1994-2002 ՔՔ. ՀԱՄԱՐ

1. Վերլուծության հիմնական նպատակն է տնտեսական զարգացման հիմնական գործոնների ու սահմանափակումների բացահայտումը և քանակական գնահատումը: Ընդ որում վերլուծությունը պետք է հնարավորություն տա անցյալում՝ 1994-2002թթ.տնտեսական զարգացումները կանխորոշող գործոններից առանձնացնել և դասակարգել բոլոր այն գործոնները որոնք տնտեսական աճի առումով միջին կամ երկարաժամկետ հեռանկարում.

- կանխորոշիչ են լինելու նաև ապագայում
- շարունակելու են դրական ազդեցություն թողնել սակայն չեն լինելու որոշիչ
- կորցնելու են իրենց ազդեցությունը կամ դրանց ազդեցությունը լինելու է աննշան
- վերածվելու են բացասական և սահմանափակող գործոնների

2. Վերլուծության արդյունքում անցյալում զարգացման հիմնական գործոնների ու սահմանափակումների սպառման բացահայտումը կամ այն փաստը որ զարգացման շարունակությունը անցյալում վճռորոշ գործոնների հիման վրա կարող է զգալիորեն սահմանափակել զարգացման տեմպերը միջին և երկարաժամկետ հեռանկարում պետք է վերլուծության առջև խնդիր դնեն բացահայտելու այն պահը որում հավանականորեն անհրաժեշտ է նախկին դետերմինանտները փոփոխել և խաղի մեջ մտցնել նոր գործոններ որոնք պետք է ապահովեն կայուն տնտեսական զարգացումը երկարաժամկետ հեռանկարի համար:

3. 1990-1993 թթ. ժամանակահատվածի ճգնաժամի վերլուծությունը անհրաժեշտ է տնտեսական զարգացման սկզբի մեկնարկային պայմանների բացահայտման և քանակական գնահատման ինչպես նաև տնտեսական զարգացման պրոցեսների վրա դրանց ազդեցության աստիճանի ինտենսիվության և շարունակելիության գնահատման համար այդ թվում և տնտեսական զարգացման գործոնների փոփոխության դեպքում:

4. Համաշխարհային տնտեսության մեջ Հայաստանի ինտեգրման աստիճանի քանակական և որակական վերլուծությունը երկրի իրական և պոտենցիալ տեղը աշխարհում բացահայտելու նպատակով երկրի իրական և պոտենցիալ համեմատական առավելությունների և դրանց օգտագործման աստիճանի զարգացման հիմնական որակական նպատակին հասնելու գործում այն է՝ առավելագույն կարճատև ժամանակահատվածում (օրինակ մի սերնդի կյանքի տևողության ընթացքում) աղքատ երկրների կատեգորիայից անցումը զարգացած երկրների կատեգորիային ինտեգրման տեղի և դերի ինչպես նաև ինտեգրացիոն գործընթացների և տնտեսական զարգացման գործընթացների փոխազդեցության բացահայտումը:

5. 1994-2002թթ. ժամանակաշրջանում մակրոտնտեսական կառուցվածքային և սոցիալական քաղաքականության վերլուծությունը պետք է անցկացվի հետևյալ նպատակով.

- Զաղաքականության հաջողվածության գնահատականը ժամանակակից շուկայական տնտեսության ինստիտուցիոնալ կառուցվածքների ու մեխանիզմների ստեղծման և տնտեսական զարգացման ու համաշխարհային տնտեսությանը որակական իսկ հնարավորության դեպքում նաև քանակական մակարդակում ինտեգրման տեսանկյունից (աջակցել է չեզոք է եղել արգելակել է): Այս գնահատականը պետք է անցկացվի քաղաքականությունների հնարավորինս առավել լայն ընդգրկմամբ:
- Զաղաքականությունների նմանատիպ գնահատականը պետք է հնարավորինս անցկացվի նաև սոցիալական գործընթացների և բնակչության զբաղվածության համար ցանկալի է տնտեսական աճի հետ փոխկապվածության մեջ եթե դա հնարավոր է:
- Վերլուծության արդյունքում բոլոր քաղաքականությունները պետք է բաժանվեն երկու դասի. անփոփոխ սոցիալ-տնտեսական զարգացման գործոնների փոփոխության նկատմամբ այսինքն՝ հիմնարար համակարգային քաղաքական որոշումները որոնց փոփոխություններն ընդունակ են փոխել հասարակության ձևավորված սոցիալական և տնտեսական կազմակերպումը լիբերալ շուկայական տնտեսությունից շեղման ուղղությամբ կամ ներկայացնում են Հայաստանի միջազգային կամավոր պարտավորությունները այդ թվում՝ միջազգային կազմակերպությունների առանձին երկրների կամ երկրների միության նկատմամբ (օրինակ՝ Առևտրի Համաշխարհային Կազմակերպությունը՝ ԱՀԿ կամ Եվրոպայի խորհուրդը) և տնտեսական և սոցիալական քաղաքականության այն մեխանիզմների վերաբերյալ որոնք կարող են կամ պետք է փոփոխվեն երկարաժամկետ կայուն տնտեսական աճի ապահովման կամ սոցիալական պրոցեսների վրա նրա ազդեցության ուժեղացման համար հասարակության համար ցանկալի ուղղությամբ:

Կոնցեպցիայի մակարդակով կարելի է առաջարկել երկրի տնտեսական զարգացման վերլուծության հետևյալ նախնական արդյունքները 1994-2002թթ. ժամանակաշրջանի համար:

Անկախության ձեռք բերումից հետո տնտեսական զարգացման գործընթացները կարելի է բաժանել երկու փուլի.

1990-1993 վաղ անցումային ժամանակաշրջան որը բնութագրվում է խորը համակարգային ճգնաժամով որն իր հերթին մասնավորապես արտահայտվում է տնտեսական ճգնաժամով (1993թ. ՀՆԱ-ի մակարդակը ճգնաժամի ներքին կետում կազմել է 1989թ. ՀՆԱ-ի մակարդակի 36 2% որը կարելի է համարել ողջ համաշխարհային պատմության մեջ ամենախոշոր և արագընթաց ճգնաժամերից մեկը) և էներգետիկ ճգնաժամով ամբողջ բնակչության կենսամակարդակի կտրուկ անկմամբ ֆինանսական համակարգի խախտմամբ և հիպերինֆլյացիայով Վարաբաղյան հակամարտության մեջ ներգրավմամբ տրանսպորտային ուղիների շրջափակմամբ:

1994-2002թթ.՝ անընդհատ տնտեսական աճի ժամանակաշրջան որը պայմանավորված էր գործոնների երեք խմբով.

- Մեկնարկային պայմանների կայունացում որն արտահայտվում է 1995թ. էներգետիկ ճգնաժամի հաղթահարմամբ 1994թ. և հետագայում Վարաբաղյան հակամարտության մեջ զինադադարի պահպանմամբ 1994թ. սկսած տրանսպորտային ուղիների և վառելիքի ներմուծման ուղիների շրջափակման թուլացմամբ ինչը հնարավորություն տվեց որոշ չափով վերականգնել կենսագործունեության նորմալ պայմանները և արտադրական գործունեության իրականացման հնարավորությունները:
- 1994-1995թթ. մակրոտնտեսական կայունության հաստատումը և հետագայում դրա հաստատումը ինֆլյացիայի նկատմամբ վերահսկողության սահմանման պետքից հետո դեֆիցիտի ինֆլյացիան ֆինանսավորման կտրուկ կրճատման իսկ 1997թ. իսպառ վերացման ազգային արժույթի լողացող կուրսի ներմուծման բյուջետային սուբսիդիաների մեծամասնության վերացման (այդ թվում նաև հացի համար նախատեսված) միջոցով:
- Հայաստանում հետսովետական երկրների համեմատ ձևավորվեց տնտեսության առավել «բաց» մոդելը: Տրանսպորտային շրջափակման առկայությունը և հետևաբար տրանսպորտային փոխադրումների զգալի քանակացումը հանգեցրին ներքին արտադրողների նկատմամբ «բնական» պրոտեկցիոնիզմի առաջացմանը: Դրա պատճառը ներքին արտադրողի «բնական-շահեկան» մրցակցային դիրքն էր ներմուծողների նկատմամբ և հետևաբար պրոտեկցիոնիստական արգելքների ավելորդությունը: Բացի դրանից արդեն անցած դարի 90-ական թթ. կեսից ղեկավարվելով աշխարհաքաղաքական և ռեսուրսային առանձնահատկություններով այդ թվում՝ բնական ռեսուրսների վաճառքի արդյունքում ձևավորվող կապիտալը երկրից արտահանելու «վտանգի» բացակայության

պատճառով (ինչպես օրինակ «ռուսական նավթադոլարների» արտահանումը) Հայաստանում արտաքին առևտրային օպերացիաների և արտարժութային կարգավորման և վերահսկման ոլորտներում ձևավորեցին լիբերալ օրենսդրություն:

Այլ էական գործոնների շարքում անհրաժեշտ է նշել երկու տիպի աղբյուրներից լայնամասշտաբ ֆինանսավորման սկիզբը. պաշտոնական արտասահմանյան և միջազգային օգնությանը որը միջին հաշվով կազմել է երկրի ՀՆԱ-ի մոտ 7%-ը և տրվել է հիմնականում շնորհների և արտոնյալ վարկերի ձևով ինչպես նաև ոչ պաշտոնական դրամական փոխանցումների մասշտաբային հոսքը որը ըստ որոշ գնահատականների կազմել է ՀՆԱ-ի 8-9%⁹: Ոչ պաշտոնական դրամական փոխանցումները կատարվել են այն անձանց կողմից ովքեր 80-90-ական թթ. արտագաղթել են կամ ժամանակավորապես աշխատում են արտասահմանում (համաձայն որոշ տվյալների Հայաստանից 1989-2001թթ. ընթացքում արտագաղթել է 600-ից 700 հազար մարդ)¹⁰:

Ճգնաժամի ժամանակաշրջանից սկսած և 1994-2002թթ. աճի շրջանում շարունակվող կառուցվածքային տեղաշարժի արդյունքում ՀՆԱ-ում արդյունաբերության բաժինը կրճատվել է 1989թ. 60%-ից մինչև 1994թ. 25%-ը և 2001թ. 20 1%-ը միաժամանակ աճել է սպասարկման ոլորտի բաժինը 1989թ. 30%-ից մինչև 1994թ. 44.7%-ը և 2001թ. 54 6%:

Տնտեսական աճի ժամանակահատվածում կրճատվել է նաև գյուղատնտեսության մասնաբաժինը 1994 թվականի 30 1%-ի փոխարեն 2001թ.-ին՝ 25 2% (1999թ. համադրելի գներով): Ընթացիկ գներով այդ կրճատումը զգալիորեն ավելին է. 43%-ից մինչև 23 5%: Տարբերությունը բացատրվում է գյուղատնտեսության համար անբարենպաստ գների համեմատական դինամիկայով: 1995-2001թթ. ընթացքում սպառողական գների ինդեքսը աճել է 177 5%-ով այն դեպքում երբ գյուղատնտեսական արտադրանքի գների ինդեքսը աճել է միայն 136 2%-ով:

Հայաստանում տնտեսական աճի էական առանձնահատկություններից մեկն այն է որ համաձայն պաշտոնական վիճակագրության տվյալների աշխատատեղերի թիվը չի աճել այլ հակառակը զգալիորեն կրճատվել է: Ընդ որում 1990-1993թթ. ճգնաժամի ժամանակաշրջանում գյուղատնտեսության մեջ զբաղվածության զգալի աճից հետո այն կայունացավ 550-570 հազ. մարդու մակարդակում իսկ ոչ գյուղատնտեսական հատվածում աճի յուրաքանչյուր տոկոսը 1994-2001թթ. զուգահիշյալում էր զբաղվածության կրճատման 0 6 տոկոսային կետով:

1994-2001թթ. շարունակվող մյուս բացասական միտումներից են աշխատանքի արտադրողականության շարունակական անկումը գյուղատնտեսության մեջ ոչ գյուղատնտեսական հատվածում աշխատանքի արտադրողականության և աշխատավարձի միջև հարաբերակցության դրական տեղաշարժի բացակայությունը միջին կենսաթոշակի և միջին աշխատավարձի միջև հարաբերակցության վատթարացումը 1995թ. 33 4%-ից մինչև 2001թ.-ի 19 1%-ը ինչպես նաև ՀՆԱ-ում և բյուջետային ծախսերում սոցիալական ծախսերի մասնաբաժնի առաջընթաց աճի բացակայությունը: Վերլուծության հիմնական եզրակացությունն այն է որ տնտեսական աճը Հայաստանում կրում է կղզիացված կլաստերային բնույթ և կենտրոնացված է մի քանի ոչ մեծ կլաստերներում որոնք հիմնված են կամ շնորհային տիպի ներդրումների կամ արտոնյալ վարկերի (օրինակ շինարարությունը) ներմուծման փոխարինողների (օրինակ սննդի և որոշ չափով թեթև արդյունաբերությունը) կամ ներմուծված հումքի վերամշակման արդյունքների արտահանման վրա (ոսկերչական արդյունաբերությունը և ալմաստների մշակումը):

Հենց դա է այն բանի հիմնական պատճառը որ տնտեսական աճը չի ավելացնում զբաղվածությունը: Նոր ստեղծվող աշխատատեղերի քանակը զարգացող կլաստերներում չի կարող գերակշռել տնտեսության ոչ մրցունակ մասում կրճատումների թիվը: Այդ կրճատումները կատարվում են հիմնականում նախկին Խորհրդային Միությունից ժառանգություն մնացած խոշոր և միջին արդյունաբերական ձեռնարկություններում: Չբաղվածության մակարդակի ցածր լինելու վրա ազդում է նաև թաքնված գործազրկությունը գյուղատնտեսության հատվածում: Մյուս կողմից զբաղվածությունը ուռճացված և վատ վարձատրվող սոցիալական ենթակառուցվածքում մնում է համեմատաբար կայուն: Այս հանգամանքը հնարավորություն չի տալիս համապատասխանաբար ավելացնել այս ոլորտում զբաղված աշխատողների վարձատրությունը քանի որ ոլորտի պահպանման համար նախատեսված բյուջետային ծախսերի և բնակչության սպառման կառուցվածքում այս ոլորտների վրա կատարվող մասնաբաժնի արագ և զգալի ավելացումն օբյեկտիվորեն անհնարին է:

Տնտեսական աճի մյուս կարևորագույն պրոբլեմը նրա տարածքային անհամաչափությունն է: Զարգացման պրոցեսները հիմնականում կենտրոնացված են Երևանում որտեղ ապրում է երկրի բնակչության 33%-ը:

Մայրաքաղաքում 2001թ. արտադրվել է ողջ արդյունաբերական արտադրանքի մոտ 50%-ը իրականացվել է հանրապետությունում գրանցված մանրածախ ապրանքաշրջանառության 80%-ը և ծառայությունների 76 3%-ը¹¹: Երևանում աղքատության մակարդակը նշված ժամանակահատվածում եղել է հանրապետությունում ամենացածրերից մեկը¹²:

Այսպիսով այն մարդկանց թիվն ում բարեկեցությունն աճում է տնտեսական աճի արդյունքում դեռևս չի գերազանցում նրանց թվին ում բարեկեցությունը չի աճում կամ կրճատվում է:

Տնտեսական աճը պայմանավորող գործոնների մասին կարելի է առանձնացնել երկու ժամանակահատված՝ 1994-1998 և 1999-2002:

Առաջին ժամանակահատվածը ամբողջությամբ կարելի է բնութագրել որպես վերականգնողական (recovery) որը հնարավոր դարձավ չորս խումբ գործոնների միաժամանակյա գործադրման շնորհիվ: Դրանք էին.

- Աճի վերականգնման համար անհրաժեշտ նյութական և տնտեսական պայմանների ստեղծումը: Այդ պայմաններից կարևորագույններն էին էներգետիկ ճգնաժամի հաղթահարումը և 1995թ. սկսած շուրջօրյա էներգասպառման վերականգնումը: Սա հնարավոր դարձավ էներգետիկայում կառուցվածքային բարեփոխումների միասնական վարձավճարներին անցնելու և Հայկական ատոմակայանի վերագործարկման շնորհիվ: Նշված կարևորագույն պայմաններից մեկն էլ մակրոտնտեսական կայունացման քաղաքականությունն է: Վերջինիս շնորհիվ սկսած 1995 թվականից հաջողվեց զգալիորեն կրճատել իսկ 1998-ից՝ կանգնեցնել արժեզրկումը կայունացնել գները ըստ փուլերի կրճատել բյուջետային դեֆիցիտը սահմանափակել ամբողջությամբ դադարեցնել բյուջեի դեֆիցիտի ֆինանսավորումը Կենտրոնական Բանկի կողմից և հիմնականում լիկվիդացնել տնտեսության բյուջետային սուբսիդավորումը:
- Արտաքին սահմանափակումների զգալի թուլացումը: Դրանից հիմնականը Ղարաբաղյան հակամարտությունում 1994թ. հաստատված զինադադարն է և նրա պահպանումը մինչև օրս: Խաղաղությունը հնարավորություն տվեց որոշակիորեն վերաբաշխել սահմանափակ ռեսուրսները ոչ ռազմական նպատակով: Չինադադարը հնարավորություն տվեց նաև թուլացնել տրանսպորտային և էներգետիկ ուղիների շրջափակումը որի շնորհիվ ռեսուրսների ներմուծումը և արտահանումը կատարվում է համեմատաբար հուսալի պայմաններում և կանխատեսելի գներով:
- Պետական սեփականության լայնամասշտաբ սեփականաշնորհումը: Արդյունաբերական ձեռնարկությունների հետ միասին գյուղատնտեսական հողերի սեփականաշնորհումը հնարավորություն տվեց զգալիորեն ընդլայնել ոչ պետական հատվածը որն արդեն իսկ 1998թ. արտադրում էր ՀՆԱ-ի մոտ 70%-ը: Սեփականաշնորհումը հնարավորություն տվեց նաև ակտիվացնել առևտուրը և կոմերցիոն ծառայությունների հատվածը որոնք «փոքր» սեփականաշնորհման արդյունքում գործնականում ամբողջությամբ դարձան մասնավոր:
- Գործոնների նշված երեք խմբերը առաջին հերթին պայմաններ ստեղծեցին նորմալ կենսագործունեության համար և երկրորդ հերթին ձևավորեցին շուկայական տնտեսության հիմնարար կառուցվածքները: Սակայն տնտեսական աճը պայմանավորող հիմնական գործոնը դարձավ ներքին պահանջարկի ընդլայնումը այսպես կոչված «Demand Push»-ի ֆինանսավորման արտաքին աղբյուրների հաշիվ: Դրանց մեջ առանձնանում էին ինչպես միջազգային կազմակերպությունների կողմից տրվող այնպես էլ երկկողմանի հիմքի վրա տրամադրվող գրանտները և արտոնյալ վարկերը որոնք հանրագումարում կազմում էին ՀՆԱ-ի մոտ 7%-ը ինչպես նաև ոչ պաշտոնական փոխանցումները (տրանսֆերտները) հիմնականում հայկական սփյուռքից որոնք առանձին գնահատականներով կազմում են տարեկան 350-ից մինչև 400 մլն դոլար: Այն մասին որ տնտեսական զարգացումը 1994-1998թթ. իրականացվում էր հիմնականում արտաքին աղբյուրների հաշիվն վկայում է Աղյուսակ 1-ը:

Այս ժամանակահատվածը բնութագրվում է նաև աննշան արտադրական ներդրումներով և դրա համար կան մի քանի պատճառներ: Առաջինը կայանում է նրանում որ արտաքին հարաբերությունների բաց ռեժիմ ունեցող երկրներում ներքին պահանջարկի բավարարումը ճգնաժամից դուրս գալու ժամանակահատվածում կարող է իրականացվել կամ ներմուծման կամ էլ ներքին արտադրության վերականգնման ուղիներով: Վերջին ուղին ավելի երկարատև է այն դեպքում երբ աճող պահանջարկի բավարարումը ներմուծման միջոցով կարող է իրականացվել գործնականում վայրկենապես: Մյուս պատճառն այն է որ ճգնաժամի կարճ տևողության (3-4

տարի) հետևանքով արտադրության վերականգնումը հիմնված է չօգտագործված արտադրական հզորությունների ռեզերվի վրա: Այդ ժամանակահատվածում ներդրումները հիմնականում ուղղորդված էին արտադրական ենթակառուցվածքի առևտրի և առևտրային ծառայությունների ոլորտի պահպանմանը:

Տնտեսական աճի երկրորդ փուլը սկսվեց 1998 թվականին և շարունակվում է մինչ օրս: Այս փուլը կարելի է բնութագրել որպես ներմուծման փոխարինման վրա հիմնված փուլ: Այս փուլում ևս շարունակում էին գործել վերը բերված բոլոր գործոնները: Դրանց հետ մեկ տեղ այս փուլում նոր գործոն դարձավ արտադրական ներդրումների զգալի աճը որը ֆինանսավորվում էր ի հաշիվ արտաքին ներդրումների (Համաշխարհային Բանկ Լինսի հիմնադրամ ԳՖՀ կառավարության վարկերը և զարգացման ուրիշ վարկեր ու շնորհներ) որոնք հիմնականում բաշխվում էին տեղական բանկային համակարգի միջոցով: Արտադրական ներդրումների մի մասը կատարվեց ներքին խնայողությունների հաշվին: (ՏԵՍ Աղյուսակ 2)

Միջին հաշվով հիմնական կապիտալի մեջ ներդրումների ծավալը 1998-2001թթ. կազմել է 116 2 միլիոն դոլար (առանց բնակարանային շինարարության մեջ մասնավոր անձանց միջոցների հաշվառման) որը 14 անգամ ավելի է քան 1995-1997 թթ. հիմնական կապիտալի մեջ ներդրումների միջին մակարդակը որը կազմել է 82 6 միլիոն դոլար:

Աղյուսակ 1. Ներդրումները և խնայողությունները (ՀՆԱ նկատմամբ տոկոսներով)¹

	1995	1996	1997	1998	1999	2000	2001	2002 նախագ
Համախառն ներքին ներդրումներ	18.4	20.0	19.1	19.9	17.9	19.7	19.2	21.4
Պետական ¹	6.8	4.1	3.5	4.9	4.6	3.8	3.9	5.5
Մասնավոր	11.8	15.9	15.6	15.0	13.3	15.9	15.3	15.9
Համախառն ազգային խնայողություններ	2.7	6.2	1.5	-1.3	1.3	5.1	9.8	13.4
Պետական	-1.6	-2.0	-1.4	0.8	0.1	-1.0	1.3	2.5
Մասնավոր	4.3	8.2	2.9	-2.1	1.2	6.1	8.5	10.2
Արտաքին խնայողություններ ²	-15.7	-13.8	-17.6	-21.2	-16.6	-14.6	-9.4	-8.0
Պետական (խնայողություններ – ներդրումներ)	-8.4	-6.1	-4.9	-4.1	-4.5	-4.8	-2.6	-3.0
Մասնավոր (խնայողություններ – ներդրումներ)	-7.3	-7.7	-12.7	-17.1	-14.5	-9.8	-6.8	-5.7

Աղբյուր՝ Ըստ Հայաստանի Ազգային վիճակագրական ծառայության տվյալների 2002թ. առաջիկա 9 ամիսների համար:

¹ Ներառյալ «Լինսի» հիմնադրամի կապիտալ ներդրումները 2002թ.

² Վճարման հաշվեկշռի ընթացիկ հաշվի դեֆիցիտը ներառյալ փոխանցումները

Աղյուսակ 2. Ներդրումները հիմնական կապիտալում (մլն. դոլար)

	1995	1996	1997	1998	1999	2000	2001
Ընդամենը ներդրումներ	88 3	126 2	115 6	150 2	147 4	187 2	192 3
այդ թվում՝							
Ուղղակի օտարերկրյա ներդրումներ	34 4	50 5	63 6	41 4	53 2	44 5	49 5
Պետբյուջե	16 8	27 7	10 4	28 5	26 5	31 8	8 6
Բնակարանային շինարարության մեջ մասնավոր անձանց սեփական միջոցները	29 1	25 2	27 7	66 1	42 7	33 7	69 8
Կազմակերպությունների սեփական միջոցները	5 3	22 7	13 8	13 5	25 1	76 7	53 9

¹ G. Iradian, G. Minassian, Armenia. Toward a Dymmic Market Economy: Policy Challenges to Sustainable and Rapid Growth, IMF, Yerevan, Armenia, September 2002

Ներդրումներ առանց բնակարանային շինարարության միջոցների	59 2	100 0	87 9	84 1	104 7	153 5	122 5
--	------	-------	------	------	-------	-------	-------

Աղբյուր՝ Ըստ Հայաստանի Ազգային վիճակագրական ծառայության տվյալների

Ներմուծման փոխարինման վրա հիմնված տնտեսական աճի մյուս յուրահատուկ գիծը ներմուծման հարաբերական կրճատումն է ինչի մասին վկայում է Աղյուսակ 3-ը: Աղյուսակից պարզ է դառնում որ 1995-1997թթ. ներմուծումը միջին հաշվով կազմել է ՀՆԱ-ի 53.4%-ը իսկ 1998-2001թթ.՝ 44.7%-ը այսինքն հարաբերականորեն կրճատվել է 16.2 տոկոսային կետով: Հաշվի առնելով այսպես կոչված կրիտիկական ներմուծումը (այսինքն այնպիսի ներմուծումը որը հնարավոր չէ փոխարինել տեղական արտադրանքով) և արտադրանքի արտահանման հետ կապված ներմուծումը որի տակ մենք առաջին հերթին հասկանում ենք հանքային և միջուկային վառելիքի ներմուծումը ինչպես նաև չմշակված ավաստների թանկարժեք և կիսաթանկարժեք քարերի ներմուծումը որոնք Հայաստանում չեն արտադրվում կարելի է ենթադրել որ 1998-2001թթ. Հայաստանի տնտեսական աճի 30-ից 60 տոկոսը պայմանավորված էր ներմուծման փոխարինմամբ:

Ներմուծման փոխարինման գործընթացը հնարավորություն ստեղծեց հիմնել զարգացման մի քանի կլաստերներ որոնցից հիմնականը սննդի արդյունաբերությունն է: Ներկայումս այն թողարկում է վերամշակող արդյունաբերական ողջ համախառն արտադրանքի 53%-ը: Ավելի փոքր չափով ներմուծման փոխարինումը նպաստեց թեթև և կոշիկի արտադրության վերականգնմանը: Դիշտ քաղաքականության դեպքում ներմուծման փոխարինումը կարող է նպաստել նաև արտահանման զարգացմանը:

Աղյուսակ 3. 1995 - 2001թթ. ապրանքների ներմուծումը Հայաստան (մլն. դոլար)

	1995	1996	1997	1998	1999	2000	2001
Ընդամենը ներմուծում	673 917	855 801	892 321	902 389	811 268	884 733	874 326
այդ թվում՝							
Վառելանյութեր նավթ և նավթամթերք	224 353	183 855	208 357	203 043	175 037	178 515	183 014
Չմշակված ավաստներ թանկարժեք և կիսաթանկարժեք քարեր	62 445	129 77	47 472	45 541	86 712	113 247	106 76
Միջուկային վառելիք	38 618	22 97	54 299	50 046	49 215	50 13	47 928
Ընդամենը կրիտիկական ներմուծում	325 416	336 595	310 128	298 63	310 964	341 892	337 702
Կրիտիկական ներմուծումը որպես ապրանքների ներմուծման %	48 28	39 33	34 75	33 09	38 33	38 64	38 62
Ոչ կրիտիկական ներմուծում	348 501	519 206	582 193	603 759	500 304	542 841	536 624
ՀՆԱ	1286 79	1599 27	1638 84	1892 96	1845 39	1915 2	2118 85
Ներմուծումը որպես ՀՆԱ-ի %	52 37	53 51	54 44	47 67	43 96	46 19	41 26
Ոչ կրիտիկական ներմուծումը որպես ՀՆԱ-ի %	27.08	32.46	35.52	31.89	27.11	28.34	25.32

Աղբյուր՝ Ըստ Հայաստանի Ազգային վիճակագրական ծառայության տվյալների

Սակայն Հայաստանի պայմաններում ներմուծման փոխանիմունը չի կարող բավականին երկար ժամանակ ծառայել որպես տնտեսական աճի հիմնական գործոն: Դրա կարևոր պատճառն այն է որ նրա հնարավորությունները սահմանափակված են ոչ կրիտիկական ներմուծման մոտ 50%-ով որը ներկայումս կազմում է ՀՆԱ-ի մոտ 12%-ը: Մյուս պատճառն այն է որ ներկայումս համախառն պահանջումը գերազանցում է ՀՆԱ սակայն այդ հարաբերակցությունը տնտեսական աճին զուգահեռ անշեղորեն կրճատվում է: Այսպես 1995թ. համախառն սպառումը կազմում էր ՀՆԱ-ի 117 4% 1998թ.՝ 111 5%-ը 2001թ.՝ 105 4%-ը: Աճի շարունակման դեպքում միջին 6% տեմպով որը համապատասխանում է 1994-2001 թթ. աճի միջին տեմպին արդեն 2004թ. ՀՆԱ կգերազանցի համախառն սպառման ծավալը: Դա նշանակում է որ սկսած այդ ժամանակից ներքին սպառման ընդլայնումը արդեն չի կարող ծառայել որպես տնտեսական զարգացման շարժիչ ուժ մասնավորապես պայմանավորելով ներմուծման փոխարինման հնարավորությունները:

1998-2002թթ. հիմնականում ստեղծվեց և հայկական ապրանքային արտահանման կառուցվածքը: Ապրանքների արտահանումը 2002թ. հասավ 507 միլիոն դոլարի որը տնտեսական աճի ժամանակաշրջանի համար բարձրագույն ցուցանիշն է:

Աղյուսակից երևում է որ ամբողջ դիտարկվող ժամանակաշրջանում խոշորագույն արտահանման կլաստեր են հանդիսացել ավաստների մշակումը և ոսկերչական արդյունաբերությունը: Չնայած հետագա զարգացման լավ հեռանկարներին կլաստերն ունի բավականին ցածր հավելյալ արժեք մոտ 12% (համարյա ամբողջությամբ ներմուծվող հումքի արժեքը կազմում է արտահանման արժեքի միջին հաշվով 88%-ը): Այս կլաստերում աշխատատեղերի մեծ թվաքանակի ստեղծման հնարավորությունները բավականին սահմանափակ են:

Աղյուսակ 4. 1995 - 2001թթ. Հայաստանի ապրանքների արտահանումը (մլն. դոլար)

	1995	1996	1997	1998	1999	2000	2001
Ընդամենը արտահանում	270 9	290 3	232 5	220 5	231 7	300 5	342 8
Թանկարժեք և կիսաթանկարժեք քարեր թանկարժեք մետաղներ	89 5	140 2	55 2	53 1	99 9	121 5	122 8
Որպես ապրանքների արտահանման %	33 0	48 3	23 7	24 1	43 1	40 4	35 8
Այլ արտահանում	181 4	150 1	177 3	167 5	131 8	179 0	220 0
այդ թվում՝							
Մննդամթերք և ծխախոտ	13 8	11 3	28 5	18 1	17 3	28 9	48 1
Մետաղներ	21 8	29 3	42 2	27 8	19 2	27 8	30 3
Լեռնահանքային արդյունաբերություն	6 3	17 0	14 6	11 7	5 4	16.0	12 9
Թեթև արդյունաբերություն	23 4	10 7	11 3	14 6	14 6	14 1	24 0
Ընդամենը թվարկված	65 3	68 3	96 6	72 2	56 5	86 8	115 2
Որպես ընդհանուր արտահանման %	24 09	23 52	41 53	32 76	24 38	28 89	33 61

Որպես արտահանման % առանց թանկարժեք քարերի	35 98	45 5	54 46	43 14	42 85	48 49	52 37
Բոլոր թվարկված խմբերը որպես արտահանման %	57 14	71 82	65 28	56 82	67 49	69 31	69 43

Աղբյուր՝ Ըստ Հայաստանի Ազգային վիճակագրական ծառայության տվյալների

2000-2002թթ. ծավալի երկրորդ արտահանող կլաստերը եղել է սննդի արդյունաբերությունը: Ըստ 2000թ. տվյալների՝ ճյուղի համախառն արտադրանքի մոտ 23%-ը արտահանվում է: Համեմատության կարգով նշենք որ անցած դարի 80-ական թթ. խորհրդային ժամանակներում արտահանվում էր սննդարդյունաբերության համախառն արտադրանքի մոտ 60%-ը: Միջնաժամկետ հեռանկարում ճյուղը տնտեսության մյուս հատվածների համեմատ ունի արտահանման զգալի աճի լավագույն հնարավորությունները: Սակայն դա ևս չի բերի աշխատատեղերի զգալի ուղղակի աճ նկատի ունենալով ճյուղում արտադրողականության համեմատական բարձր մակարդակը (2001թ թողարկման ծավալը մեկ զբաղվածի հաշվով գերազանցել է 10000 ԱՄՆ դոլարը): Մյուս կողմից ճյուղում արտադրության աճը չի պահանջի զգալի ներդրումներ և կնպաստի գյուղատնտեսությունում ապրանքայինության աստիճանի աճին: Սա պայմանավորված է նրանով որ սննդարդյունաբերության ճյուղը հիմնականում օգտագործում է տեղական հումքը և Հայաստանում ունի ամենաբարձր հավելյալ արժեքը:

Աղյուսակ 4-ը ցույց է տալիս որ արտահանման վրա հիմնված տնտեսական աճի տեսանկյունից ապրանքային արտահանման ձևավորված կառուցվածքը ռացիոնալ չէ մի շարք պատճառներով: Առաջին հերթին ապրանքային արտահանման անվանացուցակը շատ սահմանափակ է: Աղյուսակում ներկայացված հինգ ապրանքային խմբերը միջին հաշվով ապահովում են ամբողջ ապրանքային արտահանման 70%-ը որից միայն ավաստների մշակումը և ոսկերչական արդյունաբերությունը՝ ամբողջ արտահանման ավելի քան 30%-ը: Երկրորդ մի ամբողջ շարք ապրանքների արտահանումը որոնք ներկայումս ունեն զգալի տեսակարար կշիռ ապրանքային արտահանման կառուցվածքում չեն հիմնվում երկրի համեմատական մրցունակության առավելությունների վրա կամ կապված չեն արտադրական գործունեության արդյունքների հետ: Հետևաբար դրանք չեն կարող ընդլայնվել կամ շարունակվել ապագայում: Օրինակ մետաղների արտահանման ծավալի 30-40%-ը կազմում է սև և գունավոր մետաղների ջարդոնի արտահանումը: Երրորդ արտադրական հզորությունների մի մեծ մասը շատ թույլ կամ ընդհանրապես չի մասնակցում արտադրանքի արտահանմանը ինչպես նաև չի մասնակցում տնտեսական աճի պրոցեսում: Մասնավորապես այդպիսի մասնակցություն համարյա չեն ցուցաբերում ԽՍՀՄ-ից ժառանգություն մնացած խոշոր և միջին ձեռնարկությունները: Չորրորդ կարելի է արձանագրել Հայաստանից արտահանման նոր շուկաների ձևավորման և ընդլայնման տեղեկանքների բացակայությունը բացառությամբ ավաստների վերամշակման և ոսկերչական արդյունաբերության: Դրա մասին են վկայում նաև ցայտուն աճման տեղեկանքների բացակայությունը և ըստ առանձին ապրանքային խմբերի արտահանման տարեկան ծավալների զգալի տատանումները:

Ընդհանրապես ներքին զարգացման և արտահանման զարգացման առկա միտումների վերլուծության արդյունքում կարելի է եզրակացնել որ Հայաստանի տնտեսությունը ընդհանուր առմամբ անբավարար չափով է ինտեգրված համաշխարհային տնտեսության կառուցվածքին:

Կատարված վերլուծության արդյունքում կարելի է գալ հետևյալ հիմնական եզրահանգումներին.

- 1995-2002թթ. Հայաստանի տնտեսությունը հիմնականում զարգացել է համախառն պահանջարկի արտաքին ֆինանսավորման հիման վրա իսկ սկսած 1998թ.՝ նաև ներմուծման փոխարինման: Այս ժամանակաշրջանում համախառն սպառումը գերազանցում էր ՀՆԱ իսկ համախառն ներդրումները՝ ներքին համախառն խնայողությունները: Արտահանումը խաղում էր ստորադաս դեր և մասնակցում էր տնտեսական աճին շատ ավելի փոքր չափերով քան արտաքին ֆինանսավորումը և ներմուծման փոխարինումը:
- 1998-2002թթ. ներմուծման փոխարինման զարգացման շարունակումը այնպիսի պայմաններում որ մոտավորապես 2004թ. սկսած ՀՆԱ-ն կգերազանցի համախառն սպառումը իսկ ներմուծման փոխարինման հնարավորությունները որպես աճի հիմնական

գործոններից մեկը սպառվեն հնարավոր կլինի միայն արտաքին ֆինանսավորման ծավալների զգալի մեծացման դեպքում: Դա կարելի է անել արտաքին վարկային փոխառությունների կամ էլ ոչ պաշտոնական դրամական փոխանցումների ծավալի մեծացման միջոցով: Չնայած Հայաստանի ներկա արտաքին պարտքը բոլոր չափանիշներով գտնվում է անվտանգ գոտում նրա զգալի մեծացումը առանց ներքին շուկայի տարողության համապատասխան ընդլայնման կարող է շատ վտանգավոր լինել և հանգեցնել վճարունակության ճգնաժամի: Մյուս կողմից տնտեսական աճը և բարեկեցության մակարդակի բարձրացումը կհանգեցնի արտոնյալ վարկավորման ներկա ծավալների կտրուկ կրճատման՝ Հայաստանի հիմնական վարկատուների միջազգային կազմակերպությունների կողմից: Դա իր հերթին հիմք կդառնա համապատասխանաբար կոմերցիոն սկզբունքների հիման վրա վարկավորմանը անցնելուն որը նույնպես մեծացնում է փոխառությունների ռիսկերը: Նկատի ունենալով աշխատուժի արտահանման վերջին տարիներին միտումները՝ հազիվ թե հնարավոր լինի կտրուկ մեծացնել ոչ պաշտոնական դրամական փոխանցումների ծավալը:

- Այսպիսով կարելի է հավաստիորեն արձանագրել որ ներկա տիպի տնտեսական աճի շարունակումը միջին և երկարատև հեռանկարում հազիվ թե հնարավոր լինի առանց արտաքին ֆինանսավորման ծավալների զգալի մեծացման ինչը մեր կարծիքով իրատեսական չէ:

ՀԱՍԱՇԽԱՐՀԱՅԻՆ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ՄԻՏՈՒՄՆԵՐԸ

Համաշխարհային տնտեսության զարգացման ցուցանիշների վերլուծությունը հնարավորություն է տալիս դատել աղքատ և հարուստ երկրների միջև խորացող ճեղքվածքի մասին: 1998թ. 28 8 տրլն. ԱՄՆ դոլար կազմող համաշխարհային համախառն արտադրանքի 22 6 տրլն. ԱՄՆ դոլարն արտադրվել է զարգացած երկրների կողմից, որտեղ բնակվում է Երկրի բնակչության ընդամենը 20%-ը (այսպես կոչված «ուսկյա» միլիարդը): Մնացած 80%-ին բաժին է ընկնում 62 տրլն. ԱՄՆ դոլար: Երկրի բնակչության մեկ հինգերորդ մասը զարգացման մեկ բևեռում 1960թ. յուրացրել է 30 անգամ ավելի շատ հարստություն, քան չորս հինգերորդը՝ մյուս բևեռում: 1993թ. այդ տարբերությունը կազմել է 61 անգամ, իսկ 1999թ.՝ արդեն 74:

Հիմնվելով 1999թ. բնակչության մեկ շնչին ընկնող ՀՆԱ-ի (ըստ գնողունակության համարժեքության) վերաբերյալ World Development Indicators 2001թ. տվյալների վրա՝ երկրները կարելի է դասակարգել ըստ հետևյալ հիմնական խմբերի.

- հարուստ և զարգացած, որոնցում բնակչության մեկ շնչին ընկնող ՀՆԱ-ի մեծությունը կազմել է 15 հազ. ԱՄՆ դոլարից ոչ պակաս;
- միջին զարգացած – 4-15 հազ. ԱՄՆ դոլար (այդ թվում՝ առաջին ենթախմբի համար՝ 7-15 հազ. ԱՄՆ դոլար, երկրորդ ենթախմբի համար՝ 4-7 հազ. ԱՄՆ դոլար);
- աղքատներ և զարգացողներ – 4 հազ. ԱՄՆ դոլարից պակաս:

Համաձայն ամենալավատեսական գնահատականների՝ մոտակա 10-15 տարիների ընթացքում արագացված տնտեսական զարգացման հնարավոր արդյունքը կարող է դառնալ մուտքը զարգացման միջին մակարդակ ունեցող առաջին ենթախմբի երկրներ: Անցումն արդեն հարուստ երկրների կարգավիճակ առավել դժվար խնդիր է. այսպես, Պորտուգալիայի և Հունաստանի (զարգացած և հարուստ երկրների ցուցակի վերջում գտնվող ներկայացուցիչներ) ներկայիս մակարդակին հասնելու համար մեզ անհրաժեշտ է ավելացնել բնակչության մեկ շնչին ընկնող ՀՆԱ-ն ավելի քան 5 անգամ:

Այս կամ այն խմբում ընդգրկված երկրների կազմը, չնայած ըստ տարբեր աղբյուրների զգալիորեն տարբերվում են, այնուամենայնիվ կարելի է փաստել, որ աշխարհի զարգացած և հարուստ երկրներից կարելի է առանձնացնել երեք հիմնական խումբ.

- Չարգացած երկրներ. ԱՄՆ Եվրոպայի 20 երկրներ Կանադա Իսրայել Ավստրալիա Նոր Զելանդիա այսինքն՝ լիբերալ շուկայական տնտեսությամբ եվրոպական մշակույթ ունեցող դեմոկրատական երկրներ: Բացի նշվածներից բարձրագույն խմբում են գտնվում Ճապոնիան և «ասիական վագրերը»՝ Կորեա Թայվան Սինգապուր Հոնկոնգ, որոնք վերջին տասնամյակում մեծ հաջողությամբ իրականացրել են տնտեսական զարգացման «հասնող-հավասարվող» տիպը: Եվրոպայի և Հյուսիսային Ամերիկայի երկրների հարստության և արագ զարգացման գլխավոր գործոններն են կայացած ինստիտուտներով շուկայական տնտեսությունը ժողովրդավարական հասարակարգը որը խթանում է ինովացիաների տեղայնացումը սպահովում ՀՆԱ-ի հավելում: Ճապոնիան և «ասիական վագրերը» կարողացան մտնել բարձրագույն խումբ առաջին հերթին շնորհիվ Արևմուտքի տեխնիկական նվաճումների արագ ընդօրինակման էժան աշխատուժի և կուտակման բարձր մակարդակի: Պետությունն այս երկրներում աջակցում էր ԱՄՆ և Եվրոպայի շուկաներ իր արտադրողների առավել էժան ապրանքների արտահանմանն ու նպաստում խնայողությունների արտակարգ բարձր մակարդակի պահպանմանը: Սակայն 1990-ականների սկզբին Ճապոնիայում, իսկ 1997թ. Հարավ-Արևելյան Ասիայի երկրների մեծ մասում ամենայն հավանականությամբ զարգացման այդ գործոնները սպառվեցին և ի հայտ եկան տնտեսական զարգացման «հասնող-հավասարվող» տիպարի սահմանափակումները: Տվյալ ճգնաժամի հաղթահարումը պահանջում է անցում կատարել զարգացման, որը հիմնված է սեփական ուժերի վրա՝ ի հաշիվ տնտեսության ազատականացման և մարդկային կապիտալի որակի բարձրացման: Սակայն ուրիշ՝ համեմատաբար աղքատ այնպիսի երկրներում ինչպիսիք են Չինաստանը Ինդոնեզիան և Վիետնամը տնտեսության հիշյալ տիպարը դեռ աշխատում է և կարելի է կանխատեսել համապատասխան միտումների պահպանում մոտակա 10-15 տարիների ընթացքում:
- Բարձրագույն խմբում են բնական հարուստ ռեսուրսներով սպահովված սակայն չզարգացած երկրները որոնք պահպանում են ավանդական ինստիտուտները և նույնիսկ ամրապնդում են դրանք՝ շնորհիվ հարստության և ժամանակակից քաղաքակրթության ուրիշների կողմից ստեղծված բարիքների հասանելիության: Դրանց թվում են Քուվեյթը ՄԱԷ Բահրեյնը և ավելի նվազ չափով Սաուդյան Արաբիան (բնակչության մեկ շնչի հաշվով 11 հազ. ԱՄՆ դոլար):
- Միջին զարգացման երկրները 1-ին ենթախմբում ներկայացված են հետևյալ կերպ. Կենտրոնական և Արևելյան Եվրոպայում՝ Չեխիա Հունգարիա Լեհաստան Սլովակիա; Լատինական Ամերիկայում՝ Արգենտինա Ուրուգվայ Չիլի Մեքսիկա; Ասիայում՝ Մալայզիա Աֆրիկայում՝ ՀԱՀ (ցուցակն ամբողջական չէ): Այդ երկրներում ապրում է 300-500 մլն. մարդ:
- 2-րդ ենթախումբ: Բացի Ռուսաստանից ցուցակի սկզբում են Թուրքիան Բրազիլիան Բալթյան երկրներն ու Բելառուսը այնուհետև Թաիլանդը Ռումինիան ու Բուլղարիան Թունիսն ու Վենեսուելան Իրաքն ու Ալժիրը և այլն: Ըստ տարբեր գնահատականների՝ այս երկրներում ապրում է 1-1.5 մլրդ. մարդ: Դրանց զգալի մասը դեռևս հնարավորություն ունի հայտնվելու նոր հետինդուստրիալ տեղեկատվական քաղաքակրթության մեծ արագություն հավաքող «գնացքում»: Սակայն սա ավելի շատ վերաբերում է բարձր մշակույթ մարդկային զարգացած ներուժ ունեցող երկրներին և ավելի քիչ նրանց որոնց ներկայիս մակարդակը բացատրվում է նավթի և բնական այլ հարստությունների առկայությամբ: 2-րդ ենթախմբի մուտքային միավորը կարելի է նվազեցնել մինչև երեք հազ. ԱՄՆ դոլար՝ բնակչության մեկ շնչի հաշվով: Այս դեպքում այս խմբում կհայտնվեն ևս 1.5 մլրդ. մարդ, ներառյալ Եգիպտոսի Մարոկկոյի Հորդանանի Ֆիլիպինների և Չինաստանի բնակչությունը: Վերջինս 1970-ական թվականների վերջում կատարեց իր նմանը չունեցող թռիչք: Տնտեսական վերլուծության ինստիտուտի տվյալներով՝ բնակչության մեկ շնչի հաշվով Չինաստանի ՀՆԱ-ն 1985թ. ԱՄՆ մակարդակի 5%-ից աճել է մինչև 9.7% 1995թ. այսինքն համեմատական արտահայտությամբ մոտավորապես երկու անգամ: Համաձայն Համաշխարհային բանկի տվյալների՝ 1999թ. Չինաստանի համախառն ներքին եկամուտը մեկ շնչի հաշվով կազմել է ամերիկյան մակարդակի 11.5% իսկ 2001թ.՝ արդեն 15%:
- Աղքատ երկրներում (Հնդկաստան՝ տարեկան 2230 ԱՄՆ դոլար մեկ շնչի հաշվով Պակիստան՝ 1860 Բանգլադեշ՝ 1530 Ինդոնեզիա՝ 2260 Վիետնամ՝ 1860 և այլն) ապրում է Երկրի բնակչության ավելի քան կեսը:

Այսպիսով, անհրաժեշտ է իրապես գնահատել այն փաստը որ աղքատ և հարուստ երկրների միջև անջրպետը շարունակում է մեծանալ և միայն աշխարհի շատ քիչ երկրների է հաջողվել անցած մի քանի տասնամյակում հաղթահարել այդ տարբերությունը և նվաճել զարգացած երկրների մակարդակը:

Այնուամենայնիվ ակնհայտ է որ զարգացման համաշխարհային միտումները վկայում են նոր իրավիճակի ձևավորման մասին, որը ստացել է «գլոբալացում» անվանումը: Այն առավելագույնս փոխում է ինչպես զարգացման տեխնոլոգիան այնպես էլ հնարավոր հետևանքները: Այս կապացությամբ հատկապես կարևորվում է գլոբալացման՝ որպես գործընթացի հիմք հանդիսացող տեղեկատվական տեխնոլոգիաների բնագավառում հետամնացությունը: Համաշխարհային բանկի տվյալներով՝ 1999թ. Երկրի 6 մլրդ բնակչությունից միայն 241 9 մլն. են օգտվում Ինտերնետ ցանցից: Բաշխումն ունի հետևյալ պատկերը.

Բարձր եկամուտներով երկրներ (զարգացած և հարուստ), այդ թվում՝	191 6 մլն. մարդ
ԱՄՆ	74 1 մլն. մարդ
Եվրոպական Միություն	41 3 մլն. մարդ
Ճապոնիա	27 1 մլն. մարդ
Միջին եկամուտներով երկրներ այդ թվում՝	45 2 մլն. մարդ
1-ին ենթախումբ	27 3 մլն. մարդ
2-րդ ենթախումբ	17 9 մլն. մարդ
Ցածր եկամուտներով երկրներ	4 8 մլն. մարդ

Համաշխարհային տնտեսության մեջ կա հասկացություն, որը ներկայացնում է ազգային տնտեսությունների հանրագումարը՝ ավելացրած առևտրային և ֆինանսական կապերը տարբեր երկրների միջև: Այդ հասկացությունն ի հայտ եկավ, երբ նշված կապերի մասշտաբների զարգացման հետևանքով ազգային տնտեսության շրջանակներում կատարվող գործընթացները շոշափելի կախվածության մեջ ընկան դրանց փոփոխություններից: Այդ կապերի ինտենսիվացման գործընթացը, դրանց փոխալայմանավորվածության ուժեղացումը անվանում են ինտեգրացում՝ կամ տարածաշրջանի կամ համաշխարհային կտրվածքով: Սակայն սա դեռ գլոբալ տնտեսությունը չէ: Վերջին հասկացությունն երևան է եկել միայն վերջին ժամանակներս՝ վերջին 10-15 տարիների ընթացքում: Մանուել Կաստելն այն բնութագրում է որպես «... տնտեսություն, որն ունակ է աշխատել որպես մեկ միասնական համակարգ ժամանակի իրական ռեժիմում, ընդհանուր մոլորակի մասշտաբով...: Միայն 20-րդ դարի վերջին համաշխարհային տնտեսությունը նոր ենթակառուցվածքների հիման վրա կարողացավ իրապես դառնալ գլոբալ: Վերջիններս իրենց հերթին հիմնված էին տեղեկատվական և հեռահաղորդակցային տեխնոլոգիաների վրա»¹⁴: ԱՄՆ ՖՊՀ-ի նախագահ Ալան Գրինսպենը գտնում է, որ գլոբալացումը ենթադրում է ազգային տնտեսությունների համակարգի աճող փոխազդեցություն՝ պայմանով, որ դրանք համատեղելի են, ծայրահեղ դեպքում, զոնե որոշակի կարևոր հարաբերություններում: Օրինակ՝ գլոբալացմանը մասնակցող ազգային տնտեսությունները պետք է ունենան շուկայական կողմնորոշում: Հնարավոր չէ ինտեգրել ոչ համատեղելի կամ «փակ» տնտեսությունները: Եվ նույնիսկ եթե խոսք գնար միատեսակ կամ միայն վարչարարական տնտեսությունների մասին, գլոբալացումը՝ որպես ազգային տնտեսությունների սահմաններից դուրս ազատ շուկայական ուժերի ազդեցության արդյունք, կլիներ անհնարին¹⁵:

Պետությունները նահանջում են իրենց անկախությունից բաց լինելու և ինտեգրման արդյունքում ձևավորվող համընդհանուր բարիքների ծավալների ավելացման համար: Վերջին հաշվով հենց դա կդառնա գլոբալ տնտեսություն: Սակայն կարելի տալ մեկ այլ սահմանում. գլոբալ տնտեսությունը համաշխարհային տնտեսության մի մասն է, որում արդեն վերացվել կամ որոշակի նվազագույն

մակարդակի են հասցվել ապրանքների, մարդկանց, կապիտալի հոսքերի խոչընդոտներն այնպես, որ կարելի է խոսել գլոբալացման՝ որպես ինտեգրման բարձրագույն աստիճանի մասին: Այսպիսին է ինտեգրման աստիճանը Եվրոպական միության ներսում: Գլոբալ տնտեսության նման բնորոշմանը մոտենում են «մեծ եռյակի» երկրները (Եվրոպական միություն – ԱՄՆ – Ճապոնիա):

Այսպիսով, գլոբալացումը կարելի է բնութագրել որպես նոր ամբողջության մեջ ազգային տնտեսությունների ինտեգրման գործընթաց, որն արտահայտվում է ապրանքների, մարդկանց, կապիտալի և տեղեկատվական միջավայրային հոսքերի ինտենսիվացմամբ: Վերջինս իր հերթին ուղեկցվում է ազգային խոչընդոտների նվազեցմամբ, ներառյալ վերազգային ինստիտուտների և հաստատությունների ձևավորում, ինչպես նաև վերազգային կառույցների օգտին ազգային անկախության սահմանափակում (իրավասությունների պատվիրակում): Այդպիսին կարող են լինել տարածաշրջանային կառույցները (Եվրոպական հանձնաժողովը, Եվրոպական պառլամենտը) պետությունների կողմից ստեղծվող միջազգային կառույցները (ՄԱԿ, ԱՄՆ, ՀԲ, ԱՀԿ), ինչպես նաև ոչ պետական վերազգային այնպիսի կառույցներ, ինչպիսիք են մասնավոր կապիտալի կողմից ստեղծված վերազգային կորպորացիաները:

Գլոբալացման գործընթացներն էապես ուժեղանում և ամրապնդվում են տեխնիկական, տեխնոլոգիական տեղեկատվական հնարավորությունների աճով, հաճախ բնութագրվում են դրանցով, սակայն դրանք գտնվում են գլոբալացման գործընթացի բնորոշման սահմաններից դուրս: Գլխավորն այն է, որ գլոբալացման գործընթացները միավորվելով տեխնոլոգիական ինովացիաների հետ՝ նվազեցնում են տրանսակցիոն և տեղեկատվական ծախսերը, դրանով իսկ նպաստում փոխադարձ կապերի և փոխանակումների ինտենսիվացմանը: Ընդլայնվում են առևտուրն ու մրցակցային դաշտը: Բարելավվում է ռեսուրսների բաշխումն ու օգտագործումը: Արագանում է առաջադիմական տեխնոլոգիաների փոխանցման գործընթացը, որի հաշվին ամբողջ աշխարհով մեկ (ադրատ երկրներում ևս) արագ տարածում են ստանում նորամուծությունները:

Ինտեգրացման ավանդական ուղղությունները, որոնց գլոբալացումը հաղորդում է արագացում և որակապես նոր մասշտաբներ, առևտուրն ու ներդրումներն են: Համաշխարհային առևտրի զարգացման տվյալները վկայում են 10 տարիների ընթացքում միջազգային առևտրի 60% աճի մասին՝ միջազգային համախառն արդյունքի 42% աճի դիմաց: Արտաքին առևտրի աճը, որպես կանոն, հանգեցնում է արտադրության աճի: 1990-1998թթ. ընթացքում առավել արագ զարգացող երկրները միջինում տարեկան ապահովում էին ապրանքների և ծառայությունների 14% աճ: Միաժամանակ այդ երկրների ՀՆԱ-ի տարեկան աճը ևս գտնվում էր ամենաբարձր մակարդակի վրա՝ տարեկան 8%:

Առևտրի առյուծի բաժինը ընկել և ընկնում է զարգացած երկրներին: Նրանց բաժինը 81%-ից նվազել է 74 8-ի՝ ի հաշիվ Արևելյան Ասիայի (առանց Ճապոնիայի) տնտեսությունների առանջացիկ զարգացման, որոնք առաջին հերթին խթանում էին արտահանումը զարգացած երկրներ: Առևտրի ծավալների և ՀՆԱ-ի հարաբերությունը գլոբալացման գլխավոր ցուցանիշներից է: Համաշխարհային բանկի տվյալներով՝ այդ հարաբերությունը միջինում ամբողջ աշխարհում ըստ գնողունակության պարիտետի, 1989թ. կազմել է 22 5%, իսկ 1999թ.՝ արդեն 27 4%:

Միջազգային առևտրի աճը կարելի է բնութագրել հետևյալ օրինաչափություններով

- ապրանքային արտահանման կազմում պատրաստի արտադրանքի աճը առաջ է ընկնում հումքի և վառելիքի արտահանման ծավալներից, իսկ վերջինս ավելի արագ է ընթանում ագրարային հատվածի արտահանման ծավալների համեմատությամբ: 1950-1998թթ. պարենային արտադրանքի և գյուղմթերքների առևտրի ծավալներն աճել են մոտավորապես 4, վառելիքինը և հանքահումքային ռեսուրսներինը՝ 6-7, պատրաստի արտադրանքինը՝ 35 անգամ:
- Ծառայությունների արտահանումն առաջ է անցել ապրանքների արտահանումից: 1980-1990թթ. ապրանքային արտահանումը տարեկան աճել է 5 5%-ով, իսկ ծառայությունների արտահանումը՝ 7 5%-ով: 1991-1999թթ.՝ տարեկան համապատասխանաբար 5 6% և 6 2%: Ծառայությունների արտահանման մոտ 40%-ը բաժին է ընկնում հեռահաղորդակցային, տեղեկատվական և տեխնոլոգիական բնագավառի ծառայություններին:
- Ապրանքային արտահանման մեջ առավել մեծ բաժին ունեն բարձր տեխնոլոգիական ապրանքները: Այս հատվածում բավական խորն է աշխատանքի բաժանումը, և երկրների միջև կոոպերացիոն կապերն առավել ինտենսիվ են: Հետևաբար, այստեղ և ծառայությունների ոլորտում ավելի մեծ են առևտրի աճի հնարավորությունները: Այստեղից էլ նմանատիպ արտադրանքի թողարկման առաջավոր դիրքեր զբաղեցնող զարգացած երկրների առևտրում դիտարկվում են այս հատվածի դերի բարձրացման

միտումներ և այդ երկրների առավել մեծ շահագրգռվածություն առևտրի պայմանների հետագա ազատականացման վերաբերյալ:

- Վերագային ընկերությունների լայնամասշտաբ տարածում:

Առևտրային արգելքների նվազեցումը սկզբունքորեն մտնում է գլոբալացման բովանդակության մեջ: Վերջինիս օգուտներն ավելացնելու համար, որոնք հատկապես շոշափելի են զարգացած երկրների համար, անհրաժեշտ է ազգային սահմանների նշանակությունը հասցնել նվազագույնի: Իսկ դա նշանակում է, որ պահանջվում է վերացնել, այսպես կոչված, քանակական (քվոտաներ, լիցենզիաներ) և սակագնային սահմանափակումները, նվազեցնել ներմուծման մաքսային սակագները: Համեմատաբար նվազ մրցունակություն ունեցող երկրների համար, ընդհակառակը, ձեռնտու է արգելքների մեծացումը՝ արտասահմանյան մրցակցությունից խուսափելու համար: Սակայն վերջին հաշվով սպառողներին, պետությանը և հենց արտադրողներին՝ մրցունակությունը խթանելու և հնարավորությունները ընդլայնելու նպատակով, ձեռնտու է արգելքների նվազեցումը ազատ առևտուրը: 1948թ. ստեղծվել է ԾԱԳ-Հ-ը, և մինչև 1990թ. ինդուստրիալ երկրների ազգային շուկաների սակագնային պաշտպանության միջին մակարդակը նվազել է 6.4 անգամ՝ ներմուծվող ապրանքների և ծառայությունների արժեքի 40%-ից մինչև 6.3%: Նվազել են նաև ոչ սակագնային արգելքները: Համաշխարհային բանկի տվյալներով՝ 1999թ. զարգացած երկրներում սակագնային պաշտպանության մակարդակը կազմել է 2.6% իսկ զարգացողներում՝ 13.3%: Այնուամենայնիվ արգելքներն ունեն բավական էական նշանակություն: Հիշյալ աղբյուրի գնահատմամբ՝ նույն ժամանակահատվածում ձեռնարկատիրության համար սակագնային արգելքների հաղթահարման միջազգային ծախսերը կազմել են ավելի քան 252.4 մլրդ ԱՄՆ դոլար, այդ թվում՝ զարգացած (բարձր եկամուտներ ունեցող) երկրների միջև՝ 96.6, զարգացող երկրներից զարգացած երկրներ՝ 41.6, զարգացածից-զարգացող՝ 49.6, զարգացող երկրների միջև՝ 65.1:

Եթե վերցնենք բոլոր տեսակի արգելքները, ներառյալ ստանդարտները, սերտիֆիկացումը և այլն, ապա արգելքների ընդհանուր արժեքն անհրաժեշտ է կրկնապատկել:

Առևտրի համաշխարհային կազմակերպությունը (ԱՀԿ), որը ձևավորվել է ԾԱԳ-Հ-ի հիմքի վրա այսօր արդեն ընդգրկում է 145 երկիր: Հայաստանը դարձավ ԱՀԿ-ի անդամ 2002թ. վերջում, չնայած արդեն 6 տարի առևտրային արգելքները պահպանում է ԱՀԿ-ի պահանջներից ցածր մակարդակի վրա:

Միգրացիա: ԱՄՆ-ի համար 1990թ. արտասահմանում աշխատողների բաժինը ընդհանուր թվաքանակում կազմել է 12%՝ 1980թ. 7%-ի դիմաց, Ավստրալիայում՝ 9%՝ 7%-ի դիմաց, Գերմանիայում հիշյալ տարիների ընթացքում այդ ցուցանիշը պահպանվում է մոտ 12%-ի վրա: Ներկա միգրացիայի կարևոր առանձնահատկությունն է, եթե XIX-XX դարերում վերաբնակվողների հոսքերը հիմնականում ուղղվում էին Եվրոպայից Ամերիկա, ապա այժմ զարգացող երկրներից՝ զարգացածներ չարավից՝ Հյուսիս: Մարդիկ նոր կյանքի կառուցման նպատակներով Եվրոպայից մեկնում էին այլ երկրներ, որոնցում աշխատելու և վաստակելու հնարավորություններն ավելի մեծ էին: Իրենց սեփական նպատակներն իրագործելով՝ նրանք զգալի ավանդ ունեցան այդ երկրների զարգացման գործընթացում: Ներկայումս դա առաջին հերթին աղքատ երկրներից գասթաբայթերների և վերաբնակվողների հոսքն է, որոնք տոգորված են ժամանակակից քաղաքակրթության բարիքներից օգտվելու և նոր հայրենիքում առանձնացված որոշակի տեղ զբաղեցնելու ձգտմամբ: Սովորաբար նրանք իրականացնում են այնպիսի աշխատանք, որը տեղացիների գնահատմամբ պախարակելի է: Այնուամենայնիվ, Համաշխարհային բանկը նշում է որ օտարերկրյա աշխատողների փոխանցումներն իրենց երկրներ ներկայումս տարեկան կազմում է մինչև 50 մլրդ. ԱՄՆ դոլար: Սա հանդիսանում է նշանակալի ցուցանիշ և շատ բանով բնութագրում զարգացող երկրներում տիրող իրավիճակը: Համենայն դեպս միգրացիայի մասշտաբներն այնպիսին են որ այն, բացի «ուղեղների արտահոսքից» չի կարելի դիտարկել որպես գլոբալացման բնութագրիչ հատկանիշ: Ինչ վերաբերում է Հայաստանին, ապա գլոբալացման հենց այս քաղաղդիչն, ամենայն հավանականությամբ, հանդիսանում է առավել կարևորը, քանի որ աշխարհով մեկ սփռված զգալի սփյուռքի առկայությունը գլոբալացումը մեր երկրի համար դարձնում է արդիական հիմնախնդիր:

Օտարերկրյա ուղղակի ներդրումներ (ՕՈՒՆ): ՕՈՒՆ-ներն հանդիսանում են գլոբալացման գործընթացի կարևոր բնութագրիչ: Նախ, դրանք ըստ սահմանման, հանդիսանում են միջազգային տնտեսական ինտեգրացման տարր: Երկրորդ, հենց դրանք վերջին 20 տարիների ընթացքում այսինքն՝ գլոբալացման սկզբից, աճել են ավելի արագ տեմպերով այնպիսի ցուցանիշների համեմատությամբ, ինչպիսիք են համախառն ներքին արդյունքը կամ առևտրի ծավալները: UNCTAD-ի գնահատականների համաձայն՝ կուտակված ՕՈՒՆ-ների (in ward stock) արժեքը

գլոբալ մասշտաբով ընթացիկ գներով 1982թ. 719 մլրդ. դոլարից աճել է և 1990թ. կազմել 1889 մլրդ. դոլար իսկ 2000թ.՝ 6 3 տրիլիոն դոլար, այսինքն արձանագրվել է ավելի քան 12 անգամ աճ¹⁶:

UNCTAD-ի 2001թ. գեկույցի տվյալները համաշխարհային ներդրումների ոլորտում վկայում են հետևյալ հիմնական միտումների մասին¹⁷.

- Արդեն իսկ նշված արագ աճ. միայն 1995-2000թթ. դրանց ծավալն ավելացել է 3 8 անգամ:
- ՕՌԻՆ-ների մեծ մասը բաժին է ընկնում զարգացած երկրներին. 1989-1994թթ. 65 8%, 2000թ.՝ 79%: Գլխավոր ռեցիպիենտներն են ԱՄՆ-ն (2000թ. 281 1 մլրդ. դոլար) ու Եվրոպական միությունը: Չարգացած երկրների բաժնի մեծացումը մեծամասամբ պայմանավորված է մի շարք զարգացող երկրների ֆինանսական ճգնաժամերով, որոնք բերեցին այդ երկրներում ներդրումներ իրականացնելու ռիսկերի բարձրացմանը և ավելի կայուն զարգացած երկրներ ուղղակի ներդրումների հոսքի կողմնորոշմանը:
- Եվրամիության բարձր թվերը բացատրվում են ՕՌԻՆ-ների հաշվարկում Եվրամիության ներսում փոխադարձ փոխանակման ներգրավմամբ. ՕՌԻՆ-ների արտաքին հոսքը 1995թ. դրանց ընդհանուր ծավալում կազմել է 47 1%, 1999թ.՝ 27 6% այսինքն ՕՌԻՆ-ների ներքին շրջանառության բաժինն աճել է 19 5%, ինչն արդյունք է եվրոպական ինտեգրացման, արգելքների վերացման և օրենսդրության ունիֆիկացման:
- Միաժամանակ զարգացած երկրների միջև ՕՌԻՆ-ների շրջանառության մեջ կարևոր դեր են խաղում վերսահմանային կլանումներն ու միաձուլումները, այսինքն ներդրումները գոյություն ունեցող ակտիվներում, որոնք հատկապես արագ էին աճում վերջին տարիներին: Այսպես, 1990թ. այդպիսի ՕՌԻՆ-ների կուտակված գումարները ընթացիկ գներով կազմել են 151 մլրդ. դոլար, իսկ 2000թ. արդեն՝ 1144 մլրդ., ընդ որում՝ 1996-1999թթ. դրանց տարեկան աճը կազմել է 50 և ավելի տոկոս¹⁸: Կլանումներն ու միաձուլումները գլոբալացման հետ անմիջականորեն առնչվող սեփականության միջազգային վերաբաշխման կարևոր գործընթացներն են:
- ՕՌԻՆ-ների գլխավոր աղբյուրներն են զարգացած երկրներն և: Գրանց բաժինը ՕՌԻՆ-ների արտահանման ընդհանուր ծավալներում կազմել է. 1995թ.՝ 85 8%, 2000թ. 91%: Գլխավոր աղբյուրը ԱՄՆ-ն է, որը միաժամանակ հանդիսանում է ՕՌԻՆ-ների և խոշորագույն ռեցիպիենտ, և մատակարար, ընդ որում՝ 1997թ. ներմուծումը գերազանցել է արտահանումը: Եվրամիության հարկային մեծ ծանրաբեռնվածություն և մեծ սոցիալական երաշխիքներ ունեցող երկրներում (Գերմանիա, Ֆրանսիա, Նիդերլանդներ, Շվեդիա) գերակշռում է հակառակ պատկերը, հատկապես, եթե ներմուծվող ՕՌԻՆ-ներից դուրս բերվեն վերսահմանային կլանումներն ու միաձուլումները:
- Նմանատիպ իրավիճակ է տիրում նաև Ճապոնիայում, որը գրեթե ներդրումներ չի ստանում դրսից, չնայած արտահանում է ոչ քիչ. 2000թ.՝ 32 9 մլրդ դոլար, իսկ մինչև 1995թ. տնտեսության լավագույն վիճակի պայմաններում՝ տարեկան 29-30 մլրդ դոլար: Կարելի է ասել, որ առևտրում լինելով «եռյակ» լիիրավ անդամ, Ճապոնիան վերջին տարիներին իր տնտեսության չափերի համեմատ թույլ մասնակցություն ունի ՕՌԻՆ-ների շրջանառության մեջ, լինելով ոչ գրավիչ դրանց համար, սակայն մնալով նշանակալից դոնոր իր տարածաշրջանում:
- Չարգացող երկրներ, որոնք բաժինը ՕՌԻՆ-ների ծավալում աճել է մինչև 1997թ. (առավելագույնը 39 6% 1996թ.), իսկ ասիական ճգնաժամից հետո նվազել է՝ 2000թ. կազմելով 19 5%: Սակայն այստեղ կլանումների և միաձուլումների տեսակարար կշիռը էականորեն ցածր է, քան զարգացած երկրների միջև շրջանառությունում: Չարգացող երկրների շրջանում ՕՌԻՆ-ների գլխավոր ստացողներն են բառացիորեն երկու տասնյակ երկիր՝ Չինաստանի գլխավորությամբ, որը 20-րդ դարի վերջին տասնամյակում ստացել է զարգացող երկրներ ուղղվող ՕՌԻՆ-ների ընդհանուր ծավալների մեկ քառորդից մինչև կեսը: Այլ խոշորագույն ռեցիպիենտներն են. Բրազիլիա (33 5 մլրդ. դոլար 2000թ.), Արգենտինա (մինչև 24 1 մլրդ. դոլար 1999թ. և կապված ճգնաժամի հետ՝ հետագա անկում մինչև 11 2 մլրդ. դոլար 2000թ.), Մեքսիկա (33 5 մլրդ. դոլար 2000թ.), Չիլի, Կոլումբիա, Վենեսուելա, Հարավային Կորեա, Թայվան, Սինգապուր, Թաիլանդ, Հնդկաստան (տարեկան 2-2 5 մլրդ. դոլար): Ռուսաստան ուղղվող ՕՌԻՆ-ների ծավալը շատ փոքր է նշված երկրների

համեմատությամբ, այն 20 անգամ զիջում է Չինաստանի նույնանուն ցուցանիշի մեծությունը: Ինդոնեզիան մինչև 1997թ. ստացել է մինչև 6 մլրդ. դոլար (1996թ.) սակայն ՕՌԻՆ-ների հոսքի հաշվեկշիռը ձեռք է բերել բացասական նշանակություն: Այդ ՕՌԻՆ-ները հոսել են ԱՄՆ և Եվրոպա:

- Որպես կանոն, ՕՌԻՆ-ները ձգտում են կայուն քաղաքական վարչակարգ, բարենպաստ հարկային համակարգ (աղբյուր հանդիսացող երկրներից ավելի ցածր), ինչպես պետության, այնպես էլ մասնավոր սուբյեկտների կողմից պայմանագրային պարտավորությունների նկատմամբ հարգալից վերաբերմունք, էժան աշխատուժ, ցածր սոցիալական երաշխիքներ ունեցող երկրներ: Չինաստանում, օրինակ՝ մինչօրս գոյություն չունի պարտադիր կենսաթոշակային համակարգ:
- ՕՌԻՆ-ների բաշխման գործում կարևոր դեր են խաղում ճանաչում ունեցող միջազգային ֆինանսական կենտրոնները: Դրանցից գլխավորներն են ԱՄՆ-ն (Նյու-Յորք) Մեծ Բրիտանիան (Լոնդոն) և Հոնկոնգը: Մեծ Բրիտանիան 2000թ. ստացել է 130 մլրդ. դոլար և արտահանել 249 2 մլրդ. դոլար, ինչը կազմում է այդ երկրի ՀՆԱ-ի 9% և 17% համապատասխանաբար: Համեմատության համար Ֆրանսիայում այդ բաժիններն են 3% և 11 9% Հոնկոնգը 2000թ. ներմուծել է 63 մլրդ. դոլար ՕՌԻՆ և արտահանել (հիմնականում Չինաստան) 64 4 մլրդ. դոլար: Մեծ Բրիտանիան ՕՌԻՆ-ների հոսքեր է ձևավորում գլխավորապես ԱՄՆ-ի Լատինական Ամերիկայի, Կենտրոնական և Արևելյան Եվրոպայի, Հոնկոնգի համար: Այդ մասին են վկայում բերված տվյալները: Ինչպես ակներևաբար վկայում են բերված տվյալները Հոնկոնգը Չինաստանի համար հանդիսանում է ՕՌԻՆ-ների յուրատեսակ «պոմպ»: Հոնկոնգին, մասնավորապես նաև Թայվանին և Սինգապուրին՝ վերջիններիս չինացի բնակիչներով, Չինաստանը պարտական է արտասահմանյան ներդրումների ֆեոնոմենալ ներհոսքով: Բարձրագույն խմբի երկրներից ոչ մեկը չունի ֆինանսական մման գործակալներ: Չինաստանը ներդրումների հենց այս հոսքին է մեծամասամբ պարտական վերջին 15-20 տարվա աճի կայուն և բարձր տեմպերի համար:
- Արևելյան և Կենտրոնական Եվրոպայի անցումային տնտեսությամբ երկրների բաժինը ՕՌԻՆ-ների համաշխարհային շրջանառության մեջ նշանակալի չէ՝ մոտավորապես 2%: Այստեղ խոշորագույն ռեցիպիենտներն են Լեհաստանը (2000թ. 10 մլրդ. դոլար) Չեխիան (1999թ. 6 3 մլրդ. դոլար) Հունգարիան (1995թ. 4 5 մլրդ. դոլար) Ռուսաստանը (մինչև ճգնաժամը՝ 1996թ. 6 6 մլրդ. դոլար, 2000թ. 2 7 մլրդ. դոլար):

Ընդհանուր եզրակացություն. ՕՌԻՆ-ների համաշխարհային շուկայում սուր մրցակցություն է: «Հասնող-հավասարվող» զարգացման կարիք ունեցող երկրները տիրապետում են սահմանափակ ռեսուրսների և բնականաբար առավելագույնս ջանքեր են գործադրում օտարերկրյա ներդրումներ ներգավելու ուղղությամբ քանի որ վերջիններիս օգնությամբ նրանք ստանում են նաև նորագույն տեխնոլոգիաներ կառավարման փորձ և նոր շուկաներ: Վերջին տասնամյակի արդյունքները վկայում են որ ՕՌԻՆ-ները նպաստում են դրանք ներգրավող երկրների զարգացմանը և բարեկեցության աճին:

Ֆինանսական շուկաներ: Ինչպես տեսնում ենք ներդրումների ցուցանիշները և կապիտալի հոսքերն աճել են ավելի արագ քան ՀՆԱ-ն ու ապրանքաշրջանառությունը: Արժեթղթերով գործառնությունների ծավալները հատկապես աժանցյալ նույնպես աճել են արագ տեմպերով: Վերջին տաս տարիներին պարտքային պարտավորություններով գործառնությունների 15-ապատիկ աճը արդեն որակական տեղաշարժ է: Մանուել Կաստելյո¹⁹ բերում է միջազգային ֆինանսական հոսքերի մասին տվյալներ (1980-1992թթ. «մեծ յոթնյակի» երկրների ՀՆԱ-ի նկատմամբ տոկոսներով). ԱՄՆ – 9.3-109.3% 11.8 անգամ 1996թ.՝ 16.4 անգամ; Գերմանիա – 7.5-90.8% 12.1 անգամ; Ֆրանսիա – 8.4-122.2% 14.5 անգամ; Իտալիա – 1.1-118.4% 108 անգամ; Կանադա – 9.6-111.22% 11.6 անգամ: Ճապոնիայի աճի զագաթնակետը 1989թ. երբ միջազգային ֆինանսական հոսքերը կազմեցին ՀՆԱ-ի 156.7% 6.3 անգամ ավելի շատ քան վերջին հինգ տարիների ընթացքում: Սակայն հետո դրանք կրճատվեցին մինչև 72.2% (1992թ.)՝ բնութագրելով տնտեսության ճգնաժամային վիճակը:

Առանձնահատուկ դիրքեր է զբաղեցնում Մեծ Բրիտանիան որտեղ միջազգային ֆինանսական հոսքերի ծավալները 1992թ. գերազանցեցին ՀՆԱ-ի մակարդակը 10 անգամ՝ 1985թ. 3.66 անգամի դիմաց: Այս ցուցանիշներում արտացոլվում է Լոնդոնի ավանդապես կարևոր միջազգային ֆինանսական կենտրոն լինելու փաստը:

Հենց այս տարիներին տեղի ունեցավ տեղեկատվական տեխնոլոգիաների պայթյունային զարգացումը որն անկասկած հզոր խթան հանդիսացավ ֆինանսական շուկաների գլոբալացման համար: Այսպիսով 20-րդ դարի վերջում գլոբալացման համար բնութագրական էր արտադրության և առևտրի էապես դանդաղ աճի վրա հիմնված ֆինանսական հոսքերի զգալի աճը: Երևի այդպիսին է ընդհանրապես գլոբալ փոփոխությունների որակական բնույթը. դրանք արտահայտվում են զարգացման առավել առաջադիմական տեղամասերում չշոշափելով կամ նվազագույնս շոշափելով ավանդական հատվածները զարգացման նախորդ փուլում ձևավորված խավերը որոնք գտնվելով առաջադիմական դիրքերում՝ երբևէ հանդիսացել են զարգացման դոմինանտներ իսկ այժմ ծառայում են որպես հիմք նոր գործընթացների համար: Ընդլայնվելով ինքնուրույնաբար ընդգրկելով նոր ոլորտներ՝ այդ գործընթացները փոխում վերակառուցում են իրենց հիմքերը չհեռացնելով դրանք սակայն տնտեսության մեջ և հասարակական կյանքում կրճատելով դրանց տեսակարար կշիռը:

Նոր տեղեկատվական և հեռահաղորդակցային տեխնոլոգիաները խթանում են գլոբալացման գործընթացներին որոնք ձևավորում են հետինդուստրիալ հասարակություն և անչափելիորեն բարձրացնում ֆինանսական շուկաների դերը:

Ընդ որում՝ զարգացած երկրներում նոր խավերը ձևավորվում են զարգացման սեփական գործընթացների հետևանքով: Իսկ մյուս երկրներում դրանք կամ փոխ են առնվում կամ չեն ծագում: Վերջին դեպքում գերակշռում են նախորդ խավերը և այդ երկրներն իրենց զարգացման գործընթացում հետընթաց են ապրում ընդ որում այնքան ավելի շատ որքան ավելի են փորձում մնալ մեկուսացված կամ ի շահ անկախության կամ կառավարող էլիտայի պահպանման կամ այնպիսի կորուստներից խուսափելու համար որոնք կապված են ավանդական կարգերի փլուզման հետ կամ էլ այս ամենը մեկ ամբողջության մեջ վերցված:

20-րդ դարի վերջին տարիներին ֆինանսական շուկաների զարգացման վերլուծության հիմնական եզրակացությունը կայանում է նրանում որ միջազգային ֆինանսներն ակնհայտորեն դուրս են եկել դրամական և ֆինանսական ազգային իշխանությունների վերահսկման գոտուց: Կապիտալի հոսքերը փաստացիորեն չեն վերահսկվում կամ վերահսկվում են միայն մասամբ՝ շուկայական ուժերի կողմից: Ավելին ֆինանսական շուկաների սուբյեկտներն իրենք են որոշում ազգային իշխանությունների քաղաքականությունը:

1990-ական թվականների կեսերին միջազգային ֆինանսական շուկաներում զարգացած երկրների ընկերությունների բաժինը կազմել է 93%: Չարգացող և անցումային երկրները նույնպես մտնում են այդ շուկաներ սակայն պետք է հաշվի առնել որ այստեղ փոխառությունները (ֆինանսական շուկաներում ակտիվ գործունեության հիմքը) նրանց համար բավականաչափ թանկ են՝ կախված վարկանիշից որն ամրագրվում է այդ երկրներին և նրանց ընկերություններին միջազգային ճանաչում ունեցող ռեյթինգային գործակալությունների կողմից:

Գոյություն ունեն բազմաթիվ հիմքեր հաստատելու որ ինչքան գլոբալացման գործընթացները խորանում են այնքան մեծ շարժունակություն են ձեռք բերում կապիտալի հոսքեր այնքան ավելի շատ են անհատական հեջավորման գործիքները այնքան ցածր է վստահությունը և կայունությունը ֆինանսական շուկաների գործունեության նկատմամբ նրա ազդեցությունն առանձին երկրներում տարածաշրջաններում և նույնիսկ ընդհանուր համաշխարհային տնտեսությունում ավելի հաճախակի է հանգեցնում ճգնաժամային երևույթների:

Դիտարկենք վերջին տարիների ճգնաժամների շղթան. 1994թ. – ճգնաժամ Մեքսիկայում; 1997-98թթ. – ճգնաժամների շղթա Չեխիայից ու Թաիլանդից Հոնկոնգից և Կորեայից մինչև Ռուսաստան և Բրազիլիա; 2000-2001թթ. – ճգնաժամ Թուրքիայում; 2001թ. – ճգնաժամ ԱՄՆ-ում. այս իրադարձությունն իր հերթին ամբողջ աշխարհում տեղիք տվեց ապակայունացման հակադարձ ալիքի և ակնհայտորեն դեռ կարող է ազդել աշխարհում տիրող իրավիճակի վրա; 2001թ. – ճգնաժամ Արգենտինայում որը բացատրվում է դոլարին պետյի ամրակցմամբ այն ժամանակ երբ հարևան Բրազիլիայում արձանագրվեց դևալյացիա, և արգենտինական ապրանքների հետ մրցակցող ապրանքները կտրուկ է ժամացան:

Ամեն անգամ ճգնաժամները բացատրվում են նշված երկրների ներքին սխալ քաղաքականությամբ բացի երևի ԱՄՆ-ի դեպքից: Սակայն ոչ «մեծ յոթնյակի» կառավարությունները ոչ ԱՄՆ-ն և Վերակառուցման ու զարգացման միջազգային բանկը չեն ցանկանում վերանայել խաղի հաստատված ընդհանուր կանոնները կասկածի ենթարկել կապիտալի շուկայի ազատականացման օգտակար լինելու դոգման: Այնուամենայնիվ համաշխարհային տնտեսությունում ակնհայտ միտումը ամենայն հավանականությամբ մոտակա տարիներին կդառնա ֆինանսական շուկաների գործունեության նոր համակարգի ձևավորումը որը գլոբալացման պայմաններում առավելագույնս ունակ կլինի սպասարկել համաշխարհային տնտեսությունը:

Վերազգային կորպորացիաներ: Գլոբալացման իրական շարժիչն են հանդիսանում վերազգային ընկերությունները: Սա վերաբերում է և առևտրին և ներդրումներին և կապիտալի շուկային և գիտա-տեխնիկական առաջընթացին: Վերազգային ընկերությունների 88%-ն ունեն իրենց գրասենյակները զարգացած երկրներում: Կան նաև այնպիսիները որոնք հիմնվել են Հունկոնգում Սինգապուրում Հարավային Կորեայում Չինաստանում Բրազիլիայում: 1999թ. ընդհանուր առմամբ ոչ ֆինանսական ոլորտում հաշվվում էր 63 հազ. ընկերություն՝ 690 հազ. արտասահմանյան մասնաճյուղերով և 177 տրլն. դոլար գլոբալ ակտիվներով: Դրանց տարեկան գումարային արտադրանքը կազմել է 14 տրլն. դոլար այսինքն համաշխարհային համախառն արտադրանքի 50%: Դրանց պատկանում է արտոնագրերի և լիցենզիաների համաշխարհային բանկի 4/5 մասը: Անդրսահմանային ապրանքների և ծառայությունների հոսքի մոտ 40%-ը ընկերությունների ներֆիրմային հոսքերն է:

Վերազգային ընկերությունների կազմում զգալի բաժին է կազմում տեխնոլոգիաների փոխանցումը: 1994թ. միայն ամերիկյան ընկերություններն իրականացրել են տեխնոլոգիաների ներֆիրմային արտահանում 17.5 մլրդ. դոլարի չափով՝ 1989թ. 10.3 մլրդ. դիմաց: Դրանցից 10.7 մլրդ. – Եվրոպա 2.7 մլրդ. – Ճապոնիա: Ընդհանուր առմամբ զարգացած երկրներ մուտք է եղել 15.2 մլրդ. դոլար իսկ զարգացող՝ 2.4 մլրդ. դոլար: Վերազգային ընկերությունները կարևորագույն դեր ունեն գիտության և տեխնիկայի զարգացման ինովացիաների տարածման գործում:

Այսպիսով այսօր վերազգային ընկերությունները հանդիսանում են հզոր ուժ և համաշխարհային տնտեսության լոկոմոտիվ հսկայական դեր են խաղում միջազգային առևտրում և առաջադիմական տեխնոլոգիաների տարածման գործում: Առանց դրանց այսօր գործնականորեն անհնար է կարևոր միջազգային շուկաներում հատկապես բարձր ավելացված արժեք ունեցող արտադրանքի ամրակցումը: Այդ իսկ պատճառով Հայաստանում կարիք չկա վախենալու վերազգային ընկերությունների ի հայտ գալուց, եթե միայն դրանք հետևում են որոշակի պայմանների: Ընդհակառակը ակնհայտ է որ նման ընկերությունների ներգրավումը Հայաստան գոյություն ունեցող ճեղքվածքի հաղթահարման գործում ունի կարևոր նշանակություն: Ինչպես վկայում է նոր հետինդուստրիալ երկրների փորձը հենց վերազգային ընկերությունները դարձան այդ երկրների վերջին մի քանի տասնամյակի առաջընթացի հիմքը: Միջազգային փորձը բովանդակում է վերազգային ընկերությունների և կառավարությունների միջև արդյունավետ համագործակցության օրինակներ՝ մասշտաբային ծրագրերի իրականացման նպատակով:

Փորձը ցույց է տալիս, որ վերազգային ընկերությունները հաճախ հանդես են գալիս որպես միջազգային շուկաներում ազգային ընկերությունների էական, իսկ ժամանակ առ ժամանակ և միակ ուղեկիցը, չխոսելով դեռ այն մասին, որ դրանք ժամանակակից տեխնոլոգիաների փոխանցման կարևորագույն աղբյուր են: Շատ երկրների կառավարություններ իրականացնում են վերազգային և տեղական ընկերությունների համագործակցության աջակցման ծրագրեր: Այսպիսով, վերազգային ընկերությունները բոլոր հիմնախնդիրներով հանդերձ զարգացման կարևոր օղակ են, ընդ որում՝ այն երկրների համար, որոնք մտահոգված են հետամնացությունը հաղթահարելու խնդրում: Միաժամանակ, իհարկե, վերազգային ընկերությունները հզոր վերազգային ուժ են, որոնք որոշ չափով սահմանափակում են ազգային կառավարությունների իշխանությունը և երկրի անկախությունը: Այսօր նրանց ազդեցությունը հիմնված է ոչ թե կառավարությունների ուղղակի վերահսկմանը, այլ ազգային տնտեսության վրա փոխազդելուն: Առաջիններն են կրճատում արտադրության ծավալները, աշխատողներին ազատում աշխատանքից, դադարեցնում են ներդրումների հոսքը այն արտասահմանյան ընկերություններ, որոնց երկրները չեն գոհացնում իրենց գործարար միջավայրով ու քաղաքական իրավիճակով կամ ճգնաժամի դեպքում գտնում են, որ առավել կարևոր է աջակցել սեփական երկրի տնտեսական ակտիվությանը: Վերազգային ընկերությունները հրապուրում և վանում են, սակայն հենց նրանց միջոցով է հնարավոր մեր երկիրն ընդգրկել գլոբալացման գործընթացում:

Գլոբալացման գործընթացում հիմնական կենտրոնները: Հաջորդ 10-15 տարիների ընթացքում համաշխարհային տնտեսության զարգացման հիմնական որոշիչ հատկանիշը, ամենայն հավանականությամբ, լինելու է համաշխարհային արտադրության մեջ ԱՄՆ-ի գերակշիռ դերի պահպանումը, որը կարող է կանխորոշել տնտեսական իրավիճակը նույնիսկ այնպիսի երկրներում, ինչպիսիսիներից Հայաստանն է, և որոնք մինչ այդ չէին հանդիսանում գլոբալացման և ինտեգրման միասնական գործընթացի մաս: Հնարավոր է նույնիսկ, որ ԱՄՆ-ն 2001-2002թթ. մուտք գործելով երկարատև ռեցեսիայի ժամանակաշրջան, կարող է նպաստել տնտեսական զարգացման դանդաղեցմանն ամբողջ աշխարհի կտրվածքով: Այնուամենայնիվ, կարելի է սպասել, որ ԱՄՆ կառավարությունը կփորձի պետական ծախսերի զգալի ավելացման և դրամավարկային քաղաքականության փոփոխման օգնությամբ ապահովել արագ ելք հիշյալ փուլից: Ամենայն հավանականությամբ, ԱՄՆ-ն միջազգային շուկայում նշվածի հետևանքով հնարավոր է

որոշակիորեն փոփոխի իր ուղղվածությունը՝ ռազմավարական բնույթի ծրագրերից (ժողովրդավարությանն աջակցում, քաղաքացիների ազատություն ու իրավունքներ և այլն) դեպի մարտավարականը, որոնք ուղղված են համաշխարհային շուկայում ամերիկյան արտադրողների համար կոնկրետ առավելությունների ապահովմանը: Այնուհայտ է, որ նման հնարավոր փոփոխություններն առավելագույնս կազդեն և ֆինանսական օգնության ծավալների ու կառուցվածքի վրա, ինչը ոչ պակաս կարևոր է այնպիսի փոքր տնտեսությունների զարգացումը կանխատեսելու համար ինչպիսին Հայաստանն է:

Մրանով պայմանավորված առավելագույնս հնարավոր է համաշխարհային տնտեսության այլ կենտրոնների դերի ակտիվացումը: Որպես այդպիսիք հանդես են գալիս Եվրամիությունը և Չինաստանը, որոնք նոր իրավիճակում անկասկած կարող են փորձել ակտիվացնել իրենց դերը միջազգային տնտեսության մեջ: Եվրամիության ընդլայնման հետ կապված վերջին փոփոխությունները սպասուցում են նման միտումների առկայությունը: Եվրամիության մեջ Կենտրոնական և Արևելյան Եվրոպայի երկրների ներգրավումը անկասկած մեծամասամբ կհանգեցնեն Եվրոպայի վերափոխմանը: Մի շարք վերլուծաբանների կարծիքով (մասնավորապես «Գլոբալ միտումներ 2015» ԿՀՎ-ի գեկույց) նման ընդլայնումը սահմանային բնույթ է կրում Եվրոպական Միության համար: Վերջին անգամ, երբ Եվրամիությունը ընդլայնվում էր (1995թ.) հնարավոր թեկնածուների թվում միայն հարուստ երկրներ էին. Շվեդիա, Ֆինլանդիա, Ավստրիա, որոնք դարձան միության անդամներ՝ առանց հատուկ ջանքեր գործադրելու: Դեպի արևելք Եվրամիության ընդլայնման նմատիպ օրինակ գտնելու համար անհրաժեշտ է ուշադրություն դարձնել 80-ական թվականներին Եվրամիություն Իսպանիայի և Պորտուգալիայի մուտքի վրա: Սակայն այս անգամ խնդիրն այլ էր ամենայն հավանականությամբ ավելի բարդ է: Կենտրոնական և Արևելյան Եվրոպայի երկրները (64 մլն. մարդ ընդհանուր բնակչությամբ և մոտ 300 մլրդ. դոլար գումարային ՀՆԱ-ով) բնակչության մեկ շնչի հաշվով ավելի աղքատ են քան Պիրենեյան թերակղզու երկրները և Հունաստանը Եվրամիություն մտնելու պահին: Եթե բնակչության մեկ շնչի հաշվով (գնողունակության պարիտետի հաշվարկով) ՀՆԱ-ի միջին ցուցանիշը Եվրամիություն մտնելու պահին կազմել է մոտ 63-64% միության միջին մակարդակի նկատմամբ ապա Կենտրոնական Եվրոպայի երկրների համար այն մի քանի անգամ ցածր է (Չեխիա - 60% Հունգարիա Սլովակիա - 56% իսկ Լեհաստանը մոտավորապես 40%): Այս երկրների ինտեգրացումը և Եվրոպայի միջին մակարդակին համապատասխան մակարդակի նվաճումը ամենայն հավանականությամբ նույնիսկ տնտեսական աճի բավական բարձր տեմպեր պահպանելու պայմաններում կարող է երկարաձգվել մի քանի տասնամյակ: Անհրաժեշտ է նշել որ Եվրոպական ինտեգրացման հիմնական խնդիրը գյուղատնտեսությունն է: Այս ոլորտում կենտրոնացված է Կենտրոնական և Արևելյան Եվրոպայի երկրների բնակչության 20-30% (Լեհաստանում 27%-ից ավելին): Եթե դիտարկենք Եվրամիության բյուջեն ապա ակնհայտ է դառնում որ հենց գյուղատնտեսությունն է հանդիսանում միության առաջնահերթ խնդիրը: Չնայած այս հատվածում զբաղված է բնակչության 4%-ը միության բյուջեից ֆերմերներին դոտացիաները կազմում են բավական խոշոր հոդված: Գյուղատնտեսության մեջ միասնական քաղաքականության շրջանակներում տարեկան հատկացվող մոտ 40 մլրդ. եվրոն Եվրամիության բոլոր ծախսերի մոտ կեսն է: ՏՀԶԿ-ի հաշվետվությունը հաստատում է որ եթե ֆերմերներին տրամադրված ուղղակի վճարներին ավելացվեն ոչ ուղղակի դոտացիաները (գների պահպանում և հարկային արտոնություններ) ապա պարզվում է որ օրինակ 2001թ. Եվրամիության գյուղատնտեսությունը ստացել է 104 մլրդ. եվրո օգնություն: Համեմատության համար կարելի է նշել որ ԱՄՆ-ում գյուղատնտեսությանը տրամադրվող դոտացիաները կազմել են շուրջ 50 մլրդ. եվրո: Եվրամիությունում ֆերմերների եկամուտները կազմում են մոտավորապես 35% դոտացիաներից այն ժամանակ երբ ԱՄՆ-ում՝ այդ ցուցանիշը 21% իսկ Նոր Զելանդիայում՝ 1%: Այսպիսով ակնհայտ է որ Եվրամիությանը ՀՆԱ-ի կառուցվածքում գյուղատնտեսության համեմատաբար բարձր մակարդակ ունեցող Կենտրոնական Եվրոպայի երկրների ինտեգրացումը մեծամասամբ ամենայն հավանականությամբ կհանգեցնի բյուջեից գյուղատնտեսությանն աջակցելու ֆինանսական դոտացիաների՝ առանց այն էլ խոշոր ծավալների ընդլայնմանը:

Անհրաժեշտ է նշել որ մոտակա 10-15 տարիներին Եվրոպական Միության համար բնութագրական կդառնա այդ միությանը Թուրքիայի ինտեգրումը որը չնայած իսլամական մշակույթին պատկանելու փաստին արդեն ավելի քան 80 տարի ձգտում է դառնալ «արևմտյան» քաղաքակրթության մաս:

Մոտակա մի քանի տարիների ընթացքում համաշխարհային տնտեսության կենտրոն կարող է դառնալ Չինաստանը որն արդեն իսկ այսօր հավակնում է տնտեսական զերտիրության կոչման (ծայրահեղ դեպքում տարածաշրջանային կտրվածքով): Գործնականորեն բարեփոխումների 23 տարիների (1978-2001թթ.) ընթացքում բնակչության իրական եկամուտներն

աճել են ավելի քան հինգ անգամ: Օրինակ՝ ԱՄՆ ԽՍՀՄ արևմտաեվրոպական երկրներին մեկ շնչի հաշվով իրական եկամուտները 5 անգամ ավելացնելու համար լավագույն դեպքում կպահանջվեր մոտ մեկ հարյուրամյակ: Աշխարհի բոլոր խոշոր տարածաշրջաններից գործնականորեն միայն Արևելյան Ասիայի երկրներին է հաջողվել հետպատերազմյան ժամանակաշրջանում կրճատել արևմտյան երկրների տնտեսական զարգացման համեմատությամբ ունեցած ճեղքվածքը, աշխարհի այլ խոշոր կենտրոնները կամ հետընթաց ապրեցին (Աֆրիկա Հարավային Ասիա) կամ կարողացան պահպանել տարբերությունը նույն մակարդակի վրա (Լատինական Ամերիկա Մերձավոր Արևելք Արևելյան Եվրոպա):

Հենց Արևելյան Ասիայում են գտնվում այն երկրները որոնք զարգացողից դարձան զարգացած (Ճապոնիա Հարավային Կորեա Թայվան Սինգապուր Հոնկոնգ): Այդ երկրներին մի քանի տասնամյակի ընթացքում հաջողվեց ապահովել տնտեսական աճի միջին տարեկան մակարդակ 7-10%-ի սահմաններում: Տնտեսական նման սրընթաց աճի նախադեպեր պատմությունը դեռևս չի ճանաչել: Գործնականորեն ամբողջ Արևելյան Ասիան «չինական» միասնական քաղաքակրթության մաս է որը դարձել է տարածաշրջանում նման նվաճումների հիմք:

2001թ. Չինաստանում մեկ շնչի հաշվով ՀՆԱ-ն (գնողունակության պարիտետի հաշվարկով) կազմել է շուրջ 15% ԱՄՆ-ի մակարդակից ընդ որում՝ նշված երկրներում աճի ընթացիկ տեմպերի պահպանման պայմաններում նրանց միջև գոյություն ունեցող տարբերությունը յուրաքանչյուր 15 տարի կկրճատվի կրկնակի անգամ այսինքն արդեն 2045թ. հիշյալ ցուցանիշները կհավասարվեն: Այնուամենայնիվ ակնհայտ է որ երկարաժամկետ հեռանկարում նման բարձր աճի տեմպերի պահպանումն անհնար է:

Սակայն հնարավոր չէ որ համաշխարհային տնտեսական այդ կենտրոնի ծագումը մեծամասամբ աշխարհագրապես կարող է սահմանափակվել այսպես կոչված «չինական» քաղաքակրթության սահմաններով որն անկասկած կդառնա միասնական համաշխարհային տնտեսական տարածության կարևոր բաղադրիչը:

Համաշխարհային տնտեսության զարգացման միտումները վկայում են Հայաստանի զարգացման այլընտրանքային մի քանի տարբերակների մասին: Բնականաբար Հայաստանի պատկանելիությունը այսպես կոչված «քրիստոնեական» քաղաքակրթությանը (որի առկայությունը առավելապես ընդգծվում է Եվրամիությանը Թուրքիայի միավորման հարցը քննարկելիս) և երկրի աշխարհագրական դիրքը գործնականում սահմանափակում են զարգացման սցենարների ընտրությունը. կամ ինտեգրացիա Եվրամիության հետ կամ Եվրամիության և նրանից դուրս այլ երկրների (առաջին հերթին Ռուսաստանի և Իրանի) հետ տնտեսական համագործակցության արդյունավետ տիպի վրա հիմնված զարգացում սակայն միասնական «եվրոպական» քաղաքակրթության շրջանակներում:

Գործնականում Հայաստանի տնտեսական զարգացման սցենարների մշակումը հանգեցվում է Եվրամիության կազմում և դրանից դուրս զարգացման տարբերակների դիտարկմանը: Ելնելով դրանից ակնհայտ է դառնում եվրոպական տնտեսական համագործակցության հետ ինտեգրման հիմնական առավելությունների և թերությունների գնահատման անհրաժեշտությունը:

Մյուս կողմից համաշխարհային տնտեսության Հայաստանի ինտեգրման գործընթացի կարևոր բնութագրիչն է վերազգային ընկերությունների ներթափանցումը Հայաստան որոնց առկայությունը մեծամասամբ փոխում է զարգացման տիպի և ապահովում զարգացման ճեղքվածքի արագացված հաղթահարումը: Ակնհայտ է որ Հայաստան վերազգային ընկերությունների ներգրավման տիպարի հաջող իրագործումից է. ընդհանուր առմամբ, կախված տնտեսական զարգացման տիպարի հաջողությունը:

ՏՆՏԵՍԱԿԱՆ ԱՃԻ ՏԻՊԻ ՓՈՓՈԽՈՒԹՅԱՆ ԵՎ ԶԱՐԳԱՅՄԱՆ ՆՈՐ ՌԱԶՄԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԸՆՏՐՈՒԹՅԱՆ ՊՐՈՔԼԵՄԸ

Վերլուծության արդյունքներից ելնելով՝ կարելի է եղրակացնել որ տնտեսական զարգացման տիպի փոփոխության և զարգացման նոր ռազմավարության ընտրության պրոբլեմը դառնում է կարևորագույն կայուն ու երկարաժամկետ տնտեսական աճի ապահովման համար: Հաջող կարևորագույն խնդիրն է դառնում համապատասխան քաղաքականությունների ու ինստիտուտների ճիշտ ընտրության պրոբլեմը: Վերջիններս պիտք է ապահովեն դրանց

գլխավոր նպատակին հասնելը՝ թռիչք առաջին աշխարհ մաքսիմալ կարճատև ժամանակի ընթացքում:

Բովանդակային տեսանկյունից տնտեսական աճը նշանակում է վերջին հաշվով ներքին շուկայի տարողության անընդհատ ընդլայնում: Ժամանակակից աշխարհում գոյություն ունեն այդպիսի ընդլայնման երկու հաջողված մոդելներ՝ եվրոպական և ասիական: Եվրոպական մոդելը հիմնված է երկրների խորը տնտեսական և նրան հետևող քաղաքական ինտեգրացիայի վրա մեկ ընդհանուր կառուցվածքի մեջ: Այդ ինտեգրացիան հնարավորություն է ստեղծում ազատ ելումուտ այլ երկրների շուկաներ առանց սպրանքների շարժի մարդկանց ու կապիտալների շարժի որևէ սահմանափակման: Ներկայումս եվրոպական մոդելի կարևոր առանձնահատկություններից է նաև միացյալ արժույթային համակարգը: Ներկայումս այս սկզբունքներով կառուցված Եվրոպական Միությունը աշխարհի խոշորագույն շուկան է: Ասիական մոդելը կառուցված է ինքնուրույն «հասնելու» զարգացման սկզբունքի վրա: Այս մոդելում ներքին շուկաների տարողության ընդլայնման կարևոր գործոն է հանդիսանում արտահանման վրա հիմնված տնտեսական աճը:

Ինտեգրացիան ներդրումների աճի գիտելիքների ու տեխնոլոգիաների ձեռք բերման հետ մեկտեղ հնարավորություն կտա շատ ավելի դյուրին քան ինքնուրույն զարգացման դեպքում յուրացնել այն արժեքները բիզնեսի իրականացման ու կազմակերպման ձևերը բարոյականությունն ու կազմակերպվածությունը որոնք յուրահատուկ են արևմտյան քաղաքականությանը: Դա իր հերթին հնարավորություն կտա կրճատելու կառույցիան բարելավել պետական ու կորպորատիվ կառավարումը և բիզնեսի միջավայրը:

Վերագրային կառուցվածքների մեջ ինտեգրումը օգնում է չեզոքացնել ներքին շուկաների սահմանափակության գործոնը մեծացնում է ներմուծման և գիտելիքների ու տեխնոլոգիաների օգտագործման հնարավորությունները: Այսպիսով մեծանում են նաև սեփական մրցունակ գիտելիքների ու տեխնոլոգիաների արտադրության հնարավորությունները: Ինչքան բարձր է ինտեգրման աստիճանը այնքան ավելի մեծ են այն օգուտները որոնք երկիրը կարող է ստանալ այդպիսի կառուցվածքի մեջ ինտեգրումից: Ամենամեծ հաջողությունները նվաճվում են այնպիսի ինտեգրացիոն կառուցվածքներում որտեղ միավորված են կամ զարգացած երկրները կամ երկրները ընտելված են թույլ զարգացած երկրների հետ մեկտեղ: Փորձը նաև ցույց է տալիս որ թույլ զարգացած երկրների ինտեգրումը միայն միմյանց միջև չի տալիս շոշափելի արդյունքներ: Սա բացատրվում է այն հանգամանքով որ այս դեպքում բացակայում է գիտելիքների ու տեխնոլոգիաների և արտադրության առաջավոր կուլտուրայի տարածման էֆեկտը որոնց հիմնական կրողները զարգացած երկրներն են: Արդյունավետ ինտեգրման համար անհրաժեշտ է նաև երկրներից որևէ մեկի ճնշող առավելությունը: Այս դեպքում մնացած երկրները զրկված են որոշումների ընդունման վրա արդյունավետ ազդեցության մեխանիզմների կիրառումից եթե նույնիսկ այդպիսի մեխանիզմները նախատեսված են ինտեգրացիոն կառուցվածքներում: Մյուս կարևոր պայմանը տնտեսական նպատակների գերակայությունն է քաղաքական նպատակների նկատմամբ: Այսինքն տնտեսական հզորության ուժեղացումը պետք է բերի քաղաքական ազդեցության աճին այլ ոչ թե ընդհակառակը: Առավել զարգացած երկրների հետ ինտեգրումը ունի նաև բացասական հետևանքներ: Դրանք են հիմնականում լուրջ ու հիվանդագին կառուցվածքային և ֆինանսական փոխակերպումները ամբողջական ճյուղերի ի սկզբանե անմրցունակ լինելը կառուցվածքային գործազրկության աճը գյուղատնտեսության պրոբլեմները և այլն: Սակայն այս ամենը մեր կարծիքով ամբողջովին փոխհատուցվում է ինտեգրման առավելությունների շնորհիվ:

Տնտեսական ինտեգրման տեսանկյունից Հայաստանը մեր կարծիքով ինտեգրացիոն կառուցվածքների անդամ չի հանդիսանում: ԱՊՀ անդամակցությունը որը դեռևս չի ձևավորվել որպես արդյունավետ տնտեսական ինտեգրման կառուցվածք հիմնականում պայմանավորված է քաղաքական շարժառիթներով և Ռուսաստանի հետ ռազմավարական գործընկերությամբ: Ռուսաստանը Հայաստանի խոշորագույն տնտեսական գործընկերն է ինչը մյուս կողմից պայմանավորում է միակողմանի կախվածությունը Ռուսաստանից որպես էներգետիկ ռեսուրսների խոշորագույն մատակարարի: ԱՊՀ մյուս երկրների հետ տնտեսական կապերը զարգացման համար որոշիչ բեկումնային չեն: Սևծովյան միության որտեղ ենթադրվում է Թուրքիայի գերիշխանությունը նույնպես չի կարելի համարել տնտեսական միավորման կազմակերպություն: Այստեղ պարզ չեն ինտեգրման հիմնական նպատակները իսկ ինքը՝ Թուրքիան երկար ժամանակ ձգտում է դեպի Եվրոպական Միություն որտեղ կենտրոնացված են նրա հիմնական տնտեսական շահերը:

Ենթադրվող ռեզիոնալ միությունները որոնց անդամը կարող է դառնալ Հայաստանը մասնավորապես Հարավ-Կովկասյան միությունը չի կարող ձևավորվել մինչև Ղարաբաղյան հակամարտության վերջնական լուծումը: Նույնիսկ այդպիսի միության ձևավորման դեպքում այն

չի կարող լուծել ներքին շուկայի նեղ լինելու պրոբլեմը: (Երեք երկրների բնակչության գումարային թիվը մոտ 15 միլիոն մարդ է այսինքն որքան Հոլանդիայում գումարային ՀՆԱ-ն՝ պակաս 10 միլիարդ դոլլարից այսինքն 30 անգամ պակաս քան Հոլանդիայում): Այս միությունը հնարավորություն չի տա նաև զարգանալ ի հաշիվ գիտելիքների ու տեխնոլոգիաների փոխանակման քանի որ այդպիսիք բացակայում են նշված երկրներում: Այնուհանդերձ ռեգիոնալ համգործակցության հեռանկարները պետք է առնձնահատուկ ուշադրության արժանան ծրագրի մշակողների կողմից հատկապես ռեգիոնալ անվտանգության և ենթակառուցվածքների զարգացման առումով:

Երկու երեք կամ չորսկողմանի կոալիցիաների կամ առանցքների ինչպիսիք են Իրան-Հայաստան Ռուսաստան-Հայաստան-Իրան հնարավորությունները կրում են մեր կարծիքով զուտ տեսական բնույթ: Իրանի հետ գործնական ինտեգրման խնդիրը անհնարին է դառնում խիստ արտահայտված մշակութային և կրոնական տարբերությունների պատճառով:

Նոր ռազմավարության ընտրության պրոբլեմի հիմնական խնդիրը հետևյալն է. որ մոդելի հիմքի վրա է հնարավոր զարգացման ստրատեգիական նպատակի նվաճումը: Այն հնարավոր է ինքնուրույն զարգացման հիմքի վրա երկկողմանի կապերի գերակայության դեպքում թե ճիշտ ուղին տնտեսական ու քաղաքական միությունների մեջ ինտեգրումն է: Վերջինիս դեպքում պետք է հաշվի առնել ֆինանսական տնտեսական ու քաղաքական որոշումների ընդունման ժամանակ ինքնուրույնության որոշակի կորուստը: Այս հարցն ըստ էության հանդիսանալով կարևորագույն ռազմավարական հարցը՝ պահանջում է բազմակողմանի հիմնավորում ինչին և պետք է որոշակի չափով նվիրված լինի զարգացման ռազմավարությունը ընտրելու աշխատանքը:

Հաջորդ քայլը կարող է լինել մոդելի ընտրությունը. միայնակ թե տնտեսական ինտեգրման որևէ համակարգում:

Երկրորդ քայլը տնտեսական ու այլ քաղաքականությունների այն մեխանիզմների ու ինստիտուտների ընտրությունն է որոնք պետք է ապահովեն ռազմավարական նպատակների նվաճումը:

Ինքնուրույն ճանապարհի ընտրությունն առաջադրում է մի քանի խնդիրներ որոնք պետք է լուծում ստանան: Ակնհայտորեն դրանցից հիմնականներն են.

- գիտելիքների ու տեխնոլոգիաների արտադրության համակարգի ներդրումը և զարգացումը
- ներդրումների և միջազգային կորպորացիաների ընդգրկումը խիստ մրցակցության պայմաններում
- ռազմավարական գործընկերների ընտրությունը և նրանց հետ հուսալի երկկողմանի հարաբերակցությունների հաստատումը
- ի վերջո աշխարհում սեփական տեղը գտնելը նրա գրավումն ու ամրացումը:

Փոքր աղքատ երկրի համար սեփական ուժերի վրա հիմնվելու սկզբունքը ներկա ժամանակներում երբ անհնար է ոչ միայն ազդել աշխարհում տեղի ունեցող գործընթացների վրա այլև հուսալիորեն կանխատեսել դրանք մեծ հավանականություն է ստեղծում ռազմավարական նպատակներին չհասնելու համար: Սա բազմիցս ապացուցվում է միջազգային փորձով: Զարգացած երկրների շարքին անցնելու ռազմավարական հաջողությունների դեպքերը շատ ավելի քիչ են քան անհաջողությունները: Անհրաժեշտ է նշել որ անհաջողության են մատնվել նաև այնպիսի երկրներ որոնք ունեին ոչ ավելի վատ մեկնարկային հնարավորություններ քան Հայաստանը:

Ինտեգրման ուղին զգալիորեն կրճատելով բարդ պրոբլեմները ինքնուրույն լուծելու հնարավորությունը խնդիր է դնում ապահովել զարգացման նպատակների համապատասխանությունը ինտեգրացիոն կառուցվածքի քաղաքականությանը: Այս տեսանկյունից նվազագույնի է հասցվում անհաջող քաղաքականության ընտրության հնարավորությունը:

Ներկայումս և կանխատեսվող բավականին հեռու ապագայում այդպիսի միակ կառուցվածք է Եվրոպական Միությունը որին ակնհայտորեն կամ ոչ բացահայտ ձգտում են Եվրոպայի և նախկին ԽՍՀՄ եվրոպական մասի բոլոր անցումային երկրները բացառությամբ Ռուսաստանի (չափազանց խոշոր լինելը նախկին գերտերության կարգավիճակը և ապագայում կրկին գերտերություն դառնալու հնարավոր կարգավիճակը այսինքն որոշումներ ընդունելու ոչ տնտեսական շարժառիթները) և Բելառուսիան հայտնի պատճառներով: Մյուս կողմից

Եվրոպական Միությունը բաց կառուցվածք է այն եվրոպական երկրների համար որոնք համապատասխանում են ընդունելության չափանիշներին որոնք իրենց հերթին հայտնի են: Երրորդ ԵՄ-ը ինտեգրման տնտեսական պատճառները գերակայող կառուցվածք է: Չորրորդ անդամակցությունը ԵՄ-ին կարելի է հաստատապես համարել ռազմավարական նպատակի իրագործում՝ երկրի դուրս գալը դեպի զարգացած աշխարհ: Դրանից հետո քաղաքականությունը և աճը արդեն կսահմանվեն ԵՄ ընդհանուր քաղաքականությամբ: Հաշվի առնելով նրա հսկայական կրիտիկական մասսան (աշխարհում ամենամեծ գումարային ՀՆԱ)՝ սխալների և ճգնաժամների հնարավորությունները կհասներ նվազագույնին:

Այսպիսի մոդելի ընտրությունը ունի նաև ուղղակի ռիսկեր: Կանխատեսվող ապագայում այդպիսի ռիսկերը երկուսն են. ԵՄ աճի դադարեցումն ի հաշիվ նոր անդամների ընդունման և Հայաստանի անդամակցության մերժումը տարբեր այդ թվում նաև ոչ տնտեսական նկատառումներով: Ներկայումս դատելով ԵՄ քաղաքականությունից և պաշտոնական հայտարարություններից՝ այդպիսի ռիսկերը նվազագույն են: Սակայն դա չի բացառում դրանց ի հայտ գալն ապագայում: Միևնույն է նույնիսկ հաշվի առնելով ԵՄ փորձագիտության և որոշումների հիմնավորման մակարդակը այս հանձնարարականներին հետևելը շատ ավելի քիչ ռիսկային է քան ինքնուրույն որոշումների ընդունումը: Մյուս կողմից որպես փոխզիջումային տարբերակ կամ ժամանակավոր լուծում հնարավոր են նաև զուգորդված (ասոցիացված) անդամությունը մաքսային միությունը (ինչպես Թուրքիայի դեպքում) և այլն որոնք կարող են դիտարկվել նշված ռիսկերը ի հայտ գալու դեպքում:

Այսպիսով զարգացման այն մոդելը որը հիմնված է երկիրը ԵՄ մտնելու ցանկության վրա որպես երկարաժամկետ ռազմավարության հիմք և այնպիսի քաղաքականությունների ընտրությունը որոնք ապահովում են ԵՄ ընդունվելու պահանջները և այդ պահանջների բավարարումը մեր կարծիքով ռազմավարական զարգացման շատ ավելի նախընտրելի տարբերակ են քան ինքնուրույն զարգացման սկզբունքը երկկողմանի կապերի հիման վրա:

Սակայն մինչև ԵՄ անդամակցելու հետ կապված բանակցությունների սկիզբը երկիրը պետք է ունենա զարգացման որոշակի նվազագույն մակարդակ ինչպես նաև բավարարի մի շարք պահանջների որոնք դիտարկվելու են ստորև: Ելնելով տնտեսական զարգացման նվազագույն մակարդակի վերլուծությունից որն անհրաժեշտ է ԵՄ անդամակցելու համար նրա նախատեսվող վերջին ընդլայնման դեպքում դա Բուլղարիայի և Ռումինիայի տնտեսական զարգացման մակարդակն է: Այստեղ ՀՆԱ-ն բնակչության մեկ շնչի հաշվով կազմում է մոտ 5000-5500 դոլար գնողունակության համարժեքությունը հաշվի առնելով: Սա գերազանցում է Հայաստանում բնակչության մեկ շնչի հաշվով ՀՆԱ-ին (ԳՆ-ն հաշվի առնելով) մոտ երկու անգամ: Մյուս կողմից այս երկրներում ՀՆԱ-ն բնակչության մեկ շնչի հաշվով կազմում է ԵՄ անդամ ամենատարբար երկրների՝ Պորտուգալիայի և Հունաստանի ՀՆԱ-ի մոտ 1/3-ը և ԵՄ միջին մակարդակի մոտ 20-25%-ը: ԵՄ ինտեգրման գործընթացը իրականում սկսելու համար Հայաստանում բնակչության մեկ շնչին ընկնող ՀՆԱ-ն գնողունակության համարժեքությունը հաշվի առնելով մեր կարծիքով պետք է կազմի մոտ 6000 դոլար (1999թ. գներով): Ամենալավատեսական կանխատեսումների համաձայն դրա համար կպահանջվի 12-15 տարի:

Այդ պատճառով երկարաժամկետ զարգացման ռազմավարության ընտրությունը հաշվի առնելով նաև Եվրոպական Միությունը ինտեգրվելու նպատակը պետք է կատարվի հետևյալ կերպ.

- Ինքնուրույն զարգացման փուլ. անցում աճի մոդելին որը հիմնված է տնտեսական զարգացման կարևորագույն գործոնի՝ արտահանման ընդլայնման վրա: Նպատակներից մեկը հնարավոր ամենակարճ ժամանակահատվածում բնակչության մեկ շնչին ընկնող ՀՆԱ-ն 6000 դոլարի մակարդակին հասցնելուն է (1999թ. գներով): Մյուս նպատակը պայմանների ու կառուցվածքների նախապատրաստումն է ինչպես նաև այն բարեփոխումների իրականացումը որոնք անհրաժեշտ են ինովացիոն զարգացման ինստիտուտների ու փուլերի աստիճանական ներդրման և հետագայում ինովացիոն զարգացման դաշտի ընդլայնման համար:
- ԵՄ ընդհանուր ինտեգրացիոն պահանջները պետք է հանդես գան որպես զարգացման սահմանափակումներ: Քաղաքականությունների ընտրությունը և միջոցառումների բաշխումը ժամանակի մեջ պետք է կատարվեն ելնելով զարգացման բարձր տեմպերի գերակայությունից: Այդ պատճառով էլ այն միջոցառումները որոնք անհրաժեշտ են ԵՄ-ը ինտեգրվելու համար սակայն կարող են բացասական ազդեցություն թողնել աճի տեմպերի վրա պետք է հետաձգվեն միջնաժամկետ փուլ կամ հարմարեցվեն ինտեգրացիոն բանակցությունների պրոցեսին:

- Դա նշանակում է նաև որ արտահանման ընդլայնման վրա հիմնված աճի մոդելին անցումը կարող է հանգեցնել առկա սոցիալ-տնտեսական քաղաքականության հիմքերի արմատական փոփոխությանը: Տնտեսական քաղաքականության ազատական և բաց բնույթն անհրաժեշտ է պահպանել:
- Արտահանման ընդլայնման վրա հիմնված աճի մոդելին անցմանը զուգահեռ պետք է իրականացվեն արդյունավետ միջոցառումներ սկզբում Peace and Corporation Agreement (PCAC) շրջանակներում ԵՄ և Հայաստանի միջև հայկական օրենսդրությունը եվրոպականին ներդաշնակ դարձնելու ուղղությամբ: Այնուհետև պետք է անց կացվի ԵՄ ընդունվելու Կոպենհագենյան չափանիշների բովանդակային վերլուծություն: Այն է.
 - քաղաքական` դեմոկրատական երաշխավորող ինստիտուտների կայունությունը օրենքի առաջնայնությունը մարդու իրավունքները փոքրամասնությունների իրավունքների հարգումը ու պաշտպանությունը և այլն
 - տնտեսական` գործող շուկայական տնտեսության առկայությունը ինչպես նաև ԵՄ ներսում շուկայական մրցակցությանը դիմակայելու հնարավորությունները
 - ԵՄ ընդունվելու չափանիշները` ԵՄ անդամի պարտականությունների կատարման հնարավորությունները այդ թվում քաղաքական տնտեսական ու արժույթային միության նպատակներին հետևելու պարտավորությունները²⁰: Այնուհետև անհրաժեշտ է ծրագիր կազմել այս չափանիշներին կամ նրանց առանձին բաղադրիչ մասերին հասնելու համար:

ԱՐՏԱՀԱՆՄԱՆ ՎՐԱ ՀԻՄՆՎԱԾ ԱՃԸ և ԻՆՈՎԱՑԻՈՆ ԶԱՐԳԱՑՈՒՄԸ

Արտահանման վրա հիմնված «ավելի արագ» զարգացման ասիական փորձը կարելի է ընդհանրացնել հետևյալ ընդհանուր դրույթներում: Այս դրույթները հաջողության հասած առանձին երկրներում կախված ամեն մի երկրի համար յուրահատուկ արտաքին և ներքին պայմանների համադրումից կիրառվում էին տարբեր արդյունավետությամբ և զանազան համամասնություններով.

- Կառավարության կողմից տնտեսության ուղիղ կառավարում: Այն կատարվում է ներքին խնայողությունների հավաքագրման անհրաժեշտ մակարդակն ապահովելու ինչպես նաև ներքին ու արտաքին ներդրումների ներգրավման համար:
- Արտահանման զարգացման կլաստերների պարբերական իդենտիֆիկացումը և ներքին ու արտաքին հնարավորությունների օգտագործումը: Դրանց թվին են պատկանում կառավարության օգնությամբ կամ երաշխավորությամբ ժամանակակից արտաքին տեխնոլոգիաների և (կամ) լիցենզիաների ստացումը արտահանող արտադրություն կազմակերպելու համար:
- Ոչ պետական բազմաճյուղ խոշոր ընկերությունների ձևավորումը որոնց մի մասը հետագայում կվերածվեն տրանսնացիոնալ ընկերությունների: Այդ ընկերությունների ձևավորման գործում աջակցությունը ներմուծվող տեխնոլոգիաների և (կամ) լիցենզիաների հիման վրա արտահանող արտադրություն կազմակերպելու համար: Նրանց համար ֆինանսավորման արտոնյալ մեխանիզմների ատեղծումը և արտահանման խթանման տարբեր մեխանիզմների կիրառումը ինչպես նաև այդ ընկերությունների աճի հնարավորություններն ապահովելու համար ներքին շուկաներում արտասահմանյան մրցակցության ժամանակավոր սահմանափակումը (այս մոդելը հիմնականում կիրառվել է Ճապոնիայում և Հարավային Կորեայում):
- Որպես արտահանող իդենտիֆիկացված կլաստերների մեջ արտասահմանյան ներդրումների ներգրավման և խրախուսման մեխանիզմների կիրառումը: (Սփյուռք ունեցող երկրներում` հիմնականում ի հաշիվ սփյուռքի կապիտալի: Հարավ-Արևելյան Ասիայում դա

հիմնականում չինական սփյուռքի կապիտալն էր): Ինչպես նաև տրանսնացիոնալ ընկերությունների ներգրավումը նրանց համապատասխան արտոնությունները տրամադրելու միջոցով իսկ շատ երկրներում համապատասխան ինֆրակառուցվածք ստեղծելու միջոցով (ազատ տնտեսական գոտիներ արդյունաբերական և մաքսագերծ գոտիներ և այլն): Որոշ երկրներում նմանատիպ պետական աջակցությունը հնարավոր է մինչև ներդրումների իրականացումը պետության հաշվին ինվեստիցիոն ռիսկի ամբողջական կամ մասնակի պետական երաշխավորումը:

Հաջողության հասած ասիական երկրների հիմնական երկարաժամկետ մրցակցային առավելությունը էժան կազմակերպված և գործնականորեն գրագետ աշխատուժի առկայությունն էր: Այս առավելությունը պահպանելու համար ասիական պետությունները առաջնահերթ ուշադրություն էին դարձնում կրթական համակարգին իրականացնում կամ խրախուսում էին մասնավոր ներդրումները կրթության համակարգի զարգացման մեջ: Այս գործընթացը սկսվում էր տարրական և միջին դպրոցից իսկ այնուհետև անցնում էր բարձրագույն կրթությանը և կադրերի վերապատրաստմանը: Ընդ որում այս դեպքում զգալիորեն ավելի քիչ ուշադրություն էր դարձվում գիտական հետազոտություններին²¹: Աճի սկզբնական փուլերում էական դեր խաղաց նաև այնպիսի կարճաժամկետ առավելություն ինչպիսին է աշխատուժի էժանությունը որը զարգացման և կենսամակարդակի բարձրացման հետ մեկտեղ կորցնում է իր նշանակությունը:

Ասիական փորձը ցույց տվեց նաև արտահանման խրախուսման վրա հիմնված աճի օբյեկտիվորեն սահմանափակ լինելու իրողությունը: Չարգացման որոշակի փուլում ուղակի պետական միջամտությունը դառնում է զարգացման խոչընդոտ և անհրաժեշտ է դառնում ազատականացնել տնտեսությունն ու ֆինանսական համակարգը որն ակներևաբար ցույց տվեց 1997թ. ասիական ճգնաժամը: Ներմուծվող տեխնոլոգիաների ու գիտելիքների վրա հիմնվելը ներմուծող երկրի համար կախվածության վտանգ է առաջացնում տեխնոլոգիաներ ու գիտելիքներ արտահանող երկրներից: Մյուս կողմից հնարավորություն չի տալիս «ավելի արագ» զարգացման մոդելը կիրառող երկրներին ամբողջովին ինտեգրվել զարգացած աշխարհին գիտելիքների ու ինովացիաների արտադրության սեփական համակարգի թերազարգացած լինելու պատճառով:

Ինովացիաների ու գիտելիքների արտադրության վրա հիմնված զարգացման տիպը գերակշռող դարձավ զարգացած աշխարհում 20-րդ դարի 80-ական թվականներին: Չարգացման այս տիպի հիմնական առանձնահատկություններն են.

- ապրանքների արտադրությունը հիմնված է տեխնոլոգիաների գիտելիքների ու ինովացիաների արտադրության սեփական համակարգի վրա
- ինֆորմացիան և տեխնոլոգիաները դառնում են այդ երկրների հիմնական արտադրանքը՝ որոշ չափով փոխարինելով նյութական արտադրությանը որն իր հերթին տեղափոխվում է ավելի զարգացած երկրներ և իրականացվում է արևմտյան գիտելիքների ու տեխնոլոգիաների հիման վրա: Այս տիպի զարգացման հիմնական նախադրյալներն են մարդկային կապիտալի զարգացման բարձր աստիճանը այդ թվում կրթության բոլոր մակարդակների զարգացման բարձր աստիճանը ինչպես նաև գիտական հետազոտությունների ու մշակումների մեջ ինովացիաների չափազանց մեծ բաժինը ինչն իր հերթին պահանջում է տնտեսական զարգացման մեկնարկային բավականին բարձր աստիճանի առկայություն: Չարգացած երկրների անցումը զարգացման ինովացիոն տիպին առաջացրեց գիտելիքների արտադրության աննախադեպ կենտրոնացում առաջին աշխարհի երկրներում: Այսպես աշխարհում գրանցված պատենտների 98%-ը մշակված է OECD երկրներում որտեղ ապրում է աշխարհի ողջ բնակչության 15%-ը²²:

Հայաստանի մրցակցային առավելություններն ու թերությունները տարբեր են արտահանման վրա հիմնված աճի և ինովացիոն զարգացման տեսակետներից:

Արտահանման վրա հիմնված աճի տեսակետից Հայաստանի մրցակցային թերությունները բավականին ակնհայտ են: Դրանք ուղիղ ծով դուրս գալու անհնարինությունն ու քաղաքական պատճառներով առաջացած տրանսպորտային սահմանափակումներն են: Այս սահմանափակումներն ըստ որոշ գնահատականների երկրի վրա նստում են ՀՆԱ-ի 1-1.5% այն երկրների հետ համեմատ որոնք ունեն այդպիսի ելքեր: Ներքին շուկայի փոքր տարողությունը հնարավորություն չի տալիս ապահովել ներքին սպառման համար նախատեսված արդյունավետ մասսայական արտադրություն: Հետևաբար այս տեսանկյունից Հայաստանն առանձնակի

ներդրումային արժեք չունի: Այս հանգամանքը նույնպես ուղղակիորեն թելադրում է կանխատեսվող ապագայում բաց տնտեսական ու ֆինանսական քաղաքականության պահպանման անհրաժեշտությունը նույնիսկ կարելի է ասել հարկադրվածությունը: Մրցակցային մյուս ակնհայտ թերությունը երկրի տնտեսության մասնավորապես արդյունաբերության կառուցվածքի անհամապատասխանությունն է այն աշխարհաքաղաքական պայմաններին որոնցում նա գտնվում է: Գոյություն ունեցող տրանսպորտային և էներգետիկ սահմանափակումները թույլ չեն տալիս արդյունավետորեն օգտագործել մի ամբողջ շարք խոշոր ձեռնարկություններ այն նպատակներին համապատասխան որոնց համար դրանք կառուցվել են կամ կիրառվել են անցյալում:

Չկարգավորված տարածքային հակամարտությունների առկայությունը Հարավկովկասյան տարածաշրջանում մասնավորապես Դարաբադյան կոնֆլիկտը էականորեն բարձրացնում է շրջանում և մասնավորապես Հայաստանում ներդրումներ կատարելու քաղաքական ռիսկը: Բավականին լայնորեն տարածված կոռուպցիան պետական և կորպորատիվ կառավարման արդյունավետ համակարգի բացակայությունը անարդյունավետ և կոռումպացված դատական համակարգը մեծացնում են ինվեստիցիաների տնտեսական ռիսկը:

Հայաստանի մրցակցային առավելությունները հիմնականում հետևյալն են.

- տնտեսապես բավականին հզոր սիյուռքի առկայությունը տարբեր գնահատականներով՝ 5-ից 7 միլիոն մարդ որոնց մոտ կեսն ապրում են Ռուսաստանում և ԱՄՆ-ում;
- համարյա 100%-ով գործնականորեն զրագետ աշխատուժ այդ թվում մի շարք մասնագիտությունների գծով բարձրորակ մասնագետների առկայությունը չնայած անհրաժեշտ է նշել որ անընդհատ արտագաղթի պատճառով նրանց թվաքանակը նվազում է;
- բարձրագույն կրթության լայն տարածումը (համապատասխան տարիքի բնակչության մոտ 25%-ը ստանում է բարձրագույն կրթություն);
- արևմտյան չափանիշներով աշխատուժի չափազանց ցածր արժեքը:

Վերջին առավելությունը կրում է ժամանակավոր բնույթ և ինչպես և մյուս երկրներում նրա նշանակությունը գնալով զգալիորեն կնվազի:

Ելնելով ասիական երկրների փորձից՝ գործառնական գրագիտության մրցակցային առավելության պահպանման ու զարգացման համար կարևորագույն գերակայությունը կրթության բարեփոխումն է: Վերջինս պահանջում է կրթության ոլորտի ծախսերի կտրուկ աճ կրթության մակարդակի արագ բարձրացման նպատակով: Սա վերաբերում է նաև բարձրագույն կրթության ոլորտին: Կրթության համակարգի բարեփոխման կարևոր պայմաններից է նաև ներկայումս ստեղծվող եվրոպական կրթական միացյալ տարածքում ինտեգրվելու երկրի պատրաստականությունը:

Մրցակցային առավելություն կարելի է համարել նաև բավականին ազատական ֆինանսական և արտաֆինանսական ռեժիմը:

Ինովացիոն զարգացման տեսակետից Հայաստանի օբյեկտիվ և սուբյեկտիվ աշխարհատնտեսական պայմանները չեն կարող համարվել մրցակցային թերություններ: Մրցակցային թերությունները պայմանավորված են բոլորովին ուրիշ գործոններով: Դրանք հիմնականում կայանում են նրանում որ զարգացման այս տիպին անցումը ենթադրում է համաաշխարհային տնտեսական համակարգի մեջ Հայաստանի շատ ավելի լայն ինտեգրացում քան առկա է: Դա վերաբերում է հատկապես բարձրագույն կրթության գիտության և հետազոտությունների ոլորտներին: Այդպիսի ինտեգրացումը պահանջում է առաջին հերթին այդ ոլորտները արևմտյան ստանդարտներին համապատասխանեցնել և երկրորդ՝ այդ ոլորտների մեջ շատ ավելի խոշոր ներդրումներ կատարել քան ներկայումս հնարավորություն ունի երկիրը:

Արտահանման վրա հիմնված զարգացմանը անցնելու և զուգահեռաբար ինովացիոն զարգացման ինստիտուտներ ներդնելու համար կառավարության առաջնահերթ նպատակներից մեկը պետք է դառնա գոյություն ունեցող և պոտենցիալ զարգացման կլաստերների իդենտիֆիկացումը ինչպես արտահանման ներուժի այնպես և ինովացիոն զարգացման հնարավորությունների տեսանկյունից: Արտահանմանը կողմնորոշված աճի տեսակետից կարելի է դասակարգել 4 տիպի զարգացման կլաստերներ.

- Այն կլաստերները որոնք ձևավորվել են կամ կարող են ձևավորվել՝ ելնելով Հայաստանում ստեղծվող ավելացված արժեքի մաքսիմալացման սկզբունքից: Դրանք պետք է հիմնված լինեն պատրաստի արտադրանքի մակարդակով տեղական հումքի վերամշակելու վրա:

Արդեն ձևավորված սեկտորների զարգացումը կարող է կատարվել արտադրանքի քանակի անվանացանկի մեծացման կամ որակի բարձրացման ճանապարհով (օրինակ՝ սննդի փայտանշակման կամ շինանյութերի արդյունաբերության մեջ) կամ արժեքի ավելացման շղթայում օղակների թվի մեծացման ճանապարհով (օրինակ՝ գունավոր մետաղների արդյունաբերության համար շղթայի ընդլայնումը մինչև մալուխների կամ էլեկտրաշարժիչների արտադրությունը՝ պղնձաձուլական կոմբինատի կառուցման հետ մեկտեղ):

- Այն կլաստերները որոնք հիմնված են բարձրորակ աշխատուժի արտադրության ավանդույթների տեխնոլոգիաների վրա և որոնք կարող են օգտագործվել նաև առավելապես ներմուծված հումք ու ռեսուրսներ (ավաստների վերամշակում ոսկերչական արդյունաբերություն թեթև ու կոշիկի արդյունաբերություն և այլն):
- Ծառայությունների արտահանման հիման վրա ձևավորված կլաստերներ որոնք հիմնված են նաև բարձրորակ աշխատուժի ու ժամանակակից տեխնոլոգիաների վրա և կարող են առաջարկել բարձրորակ ծառայություններ մրցունակ գներով: Այդպիսի կլաստերները կարող են դառնալ առողջապահության բարձրագույն և հետբարձրագույն կրթության առաջին ոլորտները ինչպես նաև ինֆորմացիոն տեխնոլոգիաների ոլորտն ամբողջությամբ:
- Արտադրանքի զանգվածային արտահանման հիման վրա հիմնված կլաստերներ որոնք պետք է օգտագործեն երկրի հիմնական մրցակցային առավելությունը այն է՝ գործնականորեն գրագետ և էժան աշխատուժը: Այդ կլաստերները որպես կանոն պետք է գործեն որպես նոր արտադրություններ: Դրանք հիմնված կլինեն նաև ներմուծվող տեխնոլոգիաների ու գիտելիքների վրա և կներգրավեն տրանսնացիոնալ ընկերություններին: Այստեղ ամենայն հավանականությամբ կառավարությունը հարկադրված կլինի իրականացնել ներդրումների քաղաքական ու տնտեսական ռիսկի նվազեցման միջոցառումների ամբողջական համակարգ՝ մինչև ներդրումների սեփական մասնակցություն իսկ որոշ դեպքերում դրանք ամբողջությամբ իր վրա վերցնելով:

Ինչ վերաբերում է ինովացիոն զարգացման պոտենցիալ կլաստերների իդենտիֆիկացմանը ապա դրանք կարելի է բաժանել երկու տիպի.

- ֆունդամենտալ գիտելիքների արտադրություն
- կիրառական հետադրություններ:

Առաջին տիպի կլաստերների իդենտիֆիկացումը որոնք որպես կանոն չեն կարող առևտրայնացվել պետք է իրականացվի գիտական գործունեության և հետազոտությունների ոլորտի արմատական բարեփոխումներին զուգահեռ: Այս բարեփոխումները կրթության համակարգի բարեփոխումների հետ միասին ինտեգրացիոն կարևորագույն միջոցառումներից են: Բարեփոխումների անհրաժեշտությունը պայմանավորված է նրանով որ չնայած ոլորտի ֆինանսավորման ծավալների և նրանում զբաղվածների թվաքանակի կտրուկ նվազելու հանգամանքին այս ոլորտի կազմակերպման և ֆինանսավորման մեխանիզմները մնացել են գործնականում անփոփոխ Խորհրդային Միության ժամանակներից և բոլորովին չեն համապատասխանում ժամանակակից շուկայական տնտեսության պահանջներին: Կիրառական հետազոտությունների կլաստերները նույնպես պետք է օպտիմալացվեն և կազմակերպական փոփոխությունների ենթարկվեն: Սա նախ և առաջ պետք է կատարվի առաջին երկրորդ և երրորդ տիպի կլաստերների գործունեության վրա ուշադրությունը կենտրոնացնելով: Դրա հիմնական նպատակը նրանց համար տեխնոլոգիաների ու գիտելիքների արտադրությունն է որոնք հետագայում կտարածվեն նաև չորրորդ տիպի կլաստերների վրա: Առաջին փուլում այդպիսի կլաստերների առևտրայնացումը բավականին դժվարանում է: Այստեղ սկզբնական շրջանում անհրաժեշտ է կիրառել բյուջետային ֆինանսավորումը և հետագայում ներդնել հաջողված հետազոտությունների առևտրային իրացման համակարգը:

Կառավարության մյուս կարևոր խնդիրը դեպքերում կլաստերների իդենտիֆիկացումն է: Ինչպես հայտնի է նախկին ԽՍՀՄ-ից ժառանգություն մնացած մեծ և միջին ձեռնարկությունների գերակշիռ մասը ոչ մի ներդրում չեն ստացել ավելի քան 10 տարիների ընթացքում և տեխնիկական ու տեխնոլոգիական տեսանկյունից անհուսալի կերպով ծերացել են: Էներգետիկ և տրանսպորտային ծախսերի աճի ինչպես նաև ավանդական շուկաների կորստի պատճառով այդ ձեռնարկությունները դարձել են անմրցունակ: Սակայն նրանց արտադրական հրապարակները և սարքավորման որոշակի մասը կարող են հիմք դառնալ հեռանկարային կլաստերներում

արտադրության կազմակերպման համար: Բացի այդ ձեռնարկությունների մեծ մասը աշխատում է արտադրական հզորությունների փոքր մասով և հրապարակների ու սարքավորման օպտիմալացման անհրաժեշտություն ունի: Այս տեսանկյունից դեպրեսիվ կլաստերների վերակառուցումն ու վերակազմակերպումը ինչպես նաև չօգտագործվող հզորությունների ու սարքավորումների օպտիմալացումը կարող է դառնալ հեռանկարային կլաստերների տնտեսական աճի և ընդլայնման կարևոր գործոն: Քանի որ վերակառուցման գործունեությունն իր մեջ որոշակի կոմերցիոն ռիսկ է պարունակում և որ ավելի կարևոր է դեպրեսիվ ձեռնարկությունները հիմնականում զուրկ են վերակառուցման համար անհրաժեշտ ֆինանսական ռեսուրսներից այն պետք է նախ և առաջ կազմակերպվի պետության կողմից՝ վերակառուցման գործակալությունների միջոցով: Մի շարք դեպրեսիվ ձեռնարկությունների համար վերակառուցման ֆունկցիան նպատակահարմար է իրականացնել սնանկացման գործընթացին զուգահեռ: Սա առաջին հերթին պահանջում է այդ ձեռնարկությունների սնանկացման գործընթացների պարզեցում ու արագացում և երկրորդ՝ սնանկացման միջոցով լիկվիդացման ու վերակառուցման ֆունկցիաների համատեղում մեկ գործակալության մեջ:

Անհրաժեշտ է նշել որ արտահանող կլաստերների առաջին երեք տիպերում զարգացման գործընթացները հնարավոր են դառնում հիմնականում ներդրումների աճի և բիզնեսի մթնոլորտի բարելավման շնորհիվ: Մեր կարծիքով դրա համար անհրաժեշտ ինստիտուցիոնալ կառուցվածքներ են հանդիսանում արտահանման և փոքր բիզնեսի ապահովագրման ու երաշխավորման կառուցվածքները (իսկ հեռանկարային կլաստերների համար տեխնոլոգիաների գիտելիքների ու լիցենզիաների ներմուծման դեպքում՝ նաև ներմուծման ապահովման ու երաշխավորման կառուցվածքները):

Մյուս մեր կործիքով անհրաժեշտ միջոցառումը տեղական արտադրատեսակների ու տեխնոլոգիաների համար միջազգային սերտիֆիկատներ ստանալու ինչպես նաև սեփական հետազոտությունները զարգացած երկրներում պատենտավորելու նպատակով պետական աջակցության համակարգի ստեղծումն է (ISO համակարգը կամ այլ ընդունված միջազգային ստանդարտներ):

Հայկական ձեռնարկությունների որոնց մեծ մասն ըստ միջազգային ստանդարտների պատկանում է փոքր բիզնեսի ոլորտին արտահանման հնարավորությունների աճն արգելակող հիմնական գործոններից մեկը մատակարարումների հնարավոր ծավալների ու պարբերականության անհամապատասխանությունն է դրանք ներմուծողների նույնիսկ նվազագույն պահանջներին:

Դա զգալիորեն իջեցնում է հայկական ապրանքների նկատմամբ հետաքրքրությունը և խոչընդոտում է խոշոր ներմուծողների կամ պատվիրատուների հետ տարվող աշխատանքը:

Սփյուռքի դերն ընդլայնելու համար ոչ միայն որպես ներդրումների տեխնոլոգիաների ու գիտելիքների պոտենցիալ աղբյուրի այլև որպես հայկական ապրանքների սպառողի և ուղեցույցի շատ կարևոր է սփյուռքի հիմնական կենտրոններում հայկական ապրանքների մատակարարման առևտրային համակարգի կամ ցանցի ստեղծումը: Այս դեպքում անհրաժեշտ է նաև զգալի պետական աջակցություն:

Չորրորդ տիպի կլաստերների ստեղծումն և զարգացումը կպահանջի պետության ավելի զգալի ակտիվություն հատկապես տրանսնացիոնալ ընկերությունների ներգրավման համար: Այստեղ կարող են օգտագործվել ֆինանսավորման համաֆինանսավորման երաշխիքների արտադրական հրապարակների սարքավորման և տրամադրման տարբեր տիպի մեխանիզմները:

Ինովացիոն տնտեսության տարրերի ձևավորումը գիտության և գիտական հետազոտությունների ոլորտի բարեփոխումների հետ մեկտեղ անհրաժեշտություն կառաջացնի մշակել պետական ծրագիր և աջակցել ինովացիոն տնտեսության ինստիտուտների ստեղծմանն ու ներդրմանը. վենչուրային և լիզինգային ընկերություններ ինվեստորական ցանցեր ինկուբատորներ ու զարգացման կենտրոններ և այլն:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԿԱՅՈՒՆ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՁԱՐԳԱՅՄԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ԾՐԱԳՐԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ

Համառոտագիր

Համառոտագիրը ներկայացնում է ծրագրի հիմնական եզրակացություններն ու առաջարկությունները համաձայն ստորև ներկայացված կառուցվածքի:

1. Ներածություն՝ Հայաստանի տնտեսական զարգացման ռազմավարական ծրագրի դերը

Ծրագրի այս մասում պետք է նկարագրվեն ծրագրի հիմնական գործառնությունները կայուն տնտեսական զարգացման տեսանկյունից ինչպես նաև գործառնությունների կապվածությունը և տարբերակումը գործող ԱՆՌԾ-ի MTEF PRGF և հեռանկարում մշակվելիք ծրագրերի և ճյուղային զարգացման ծրագրերի հետ:

2. Բաժին 1՝ Հայաստանի տնտեսական զարգացման հիմնական նպատակները

Այս մասը նվիրված է ծրագրի հիմնական որակական և քանակական նպատակներին որոնք կբնութագրեն տնտեսական զարգացման մակարդակները: Համաձայն Հայեցակարգի հիմնական որակական նպատակը սահմանված է որպես 20-25 տարվա ընթացքում թռիչք/անցում աշխարհի զարգացած երկրների շարքը: Քանակական նպատակների խումբը պետք է որոշվի երկու մակարդակով: Առաջին մակարդակում նպատակ է դրված հասնել տնտեսական տեմպերի առավելագույն աճի որպեսզի 10-12 տարում ՀՆԱ-ն (գնողունակության համարժեքությամբ չափված) բնակչության մեկ շնչի հաշվով կրկնապատկվի: Երկրորդ մակարդակում դրված են ինտեգրման նպատակներ՝ հեռանկարում բավարարել ԵՄ-ին միանալու ներկա չափանիշները ծրագրի տևողության ընկած ժամանակահատվածում: Անդամակցության չափանիշներին համապատասխանելու գործընթացները և նպատակները պետք է այնպես բաշխվեն ծրագրի իրականացման ժամանակահատվածում որպեսզի չխոչընդոտեն տնտեսական զարգացման բարձր տեմպերին:

Երկրորդ մակարդակում կան նպատակներ որոնք պետք է որոշվեն ծրագրի իրականացման շրջանակներից դուրս ինչպիսիք են օրինակ աղքատության և անհավասարության նվազեցումը հազարամյակի նպատակները և այլն: Այս նպատակները սույն ծրագրում կամ ածանցյալ են տնտեսական աճի նկատմամբ ինչպես օրինակ աղքատության նվազեցումը կամ էլ դիտվում են որպես աճի գործընթացների սահմանափակումներ որոնք պետք է հաշվի առնվեն ինչպիսիք են օրինակ անհավասարության նվազեցումը կամ երկրորդ մակարդակի նպատակները՝ Եվրոպական Միությանը միանալու չափանիշների բավարարումը:

3. Բաժին 2: 1994-2002 թթ. տնտեսական աճի գործոնների վերլուծություն

Համաձայն Հայեցակարգի սույն վերլուծության հիմնական նպատակն է ցույց տալ և քանակապես գնահատել տնտեսական զարգացման հիմնական գործոնները և սահմանափակումները և հետագայում շարունակաբար գնահատել տնտեսական զարգացման հնարավորությունները և սահմանափակումները՝ հաշվի առնելով այն գործոնները և սահմանափակումները որոնք վճռական էին 1994-2001 թթ. տնտեսական զարգացման համար:

Եթե վերլուծության ընթացքում ակնհայտ դառնա որ նախկինում զարգացման հիմնական որոշիչներ հանդիսացող գործոնները և սահմանափակումները սպառել են իրենց կամ պարզվի որ այս կամ այն գործոնը միջին և երկարաժամկետ հեռանկարում կարող է էականորեն արգելակել երկրի զարգացման տեմպերը ապա վերլուծությունը պետք է հնարավորություն ընձեռնի գնահատել թե երբ և ինչպես է պետք ներգործել առակ գործոնների վրա և ներմուծել նոր գործոններ որոնք կապահովեն տնտեսական կայուն զարգացում երկարաժամկետ հեռանկարում:

Վերլուծությունը պետք է ընգրկի հետևյալ թեմաները՝

- 1990-1993 թթ. ճգնաժամի ժամանակաշրջան. այստեղ պետք է ցույց տալ և քանակապես գնահատել սկսվող տնտեսական աճի սկզբնական պայմանները և տնտեսական զարգացման պրոցեսի վրա նրանց ազդեցության մակարդակը ինտեսիվությունը և տևողությունը:
- 1994-2002 թթ. տնտեսական աճի հիմնական գործոնների որակական և քանակական վերլուծություն. աճի հիմնական առանձնահատկությունները մակրո և մայրաքաղաքի մակարդակի վրա տնտեսական և սոցիալական զարգացման կարևորագույն ցուցանիշների հետ կապը - ներքին և արտաքին ներդրումներ խնայողություններ աշխատուժի արտադրողականություն և զբաղվածություն արտաքին և ներքին պարտք աղբատություն և անհավասարություն բնակչության եկամուտներ և այլն: Աճի մայրաքաղաքի բաշխվածությունը տնտեսության աճող և անկում ապրող մայրաքաղաք և կլաստերները: Աճի գործոնների վերլուծության արդյունքում պետք է որոշվեն դրանցից հիմնականները պետք է հաշվարկվի գործոնների դերը աճի մեջ և այդ գործոնների հիման վրա պետք է գնահատվի հետագա աճը:
- Համաշխարհային տնտեսության մեջ Հայաստանի ինտեգրման մակարդակի որակական և քանակական վերլուծություն. ցույց տալու Հայաստանի իրական և պոտենցիալ տեղը աշխարհում իր առկա և հնարավոր համեմատական առավելությունները և նրանց օգտագործման մակարդակը ինտեգրման դերը զարգացման հիմնական որակական նպատակին հասնելու գործում ցածր եկամուտով երկրների շարքից բարձր եկամուտ ունեցողների դասին անցումը հնարավորինս կարճ ժամանակահատվածում՝ ապահովելու ինտեգրման և տնտեսական զարգացման փոխադարձ ազդեցությունը: Ներմուծման և արտահանման հիմնական շուկաների վերլուծության վրա հիմնվելով կորոշվեն Հայաստանի հիմնական առևտրային գործընկերները:
- 1994-2002 թթ. մակրոտնտեսական կառուցվածքային և սոցիալական քաղաքականությունների վերլուծությունը պետք է կատարվի հաշվի առնելով հետևյալ նապատակները՝ քաղաքականության հաջողված լինելու քանակական գնահատումը (խրախուսող չեզոք խոչնդոտող) և եթե դա հնարավոր է որակական գնահատումը հաշվի առնելով ինստիտուցիոնալ կառույցների և ժամանակակից շուկայական տնտեսության մեխանիզմների ստեղծումը նրանց ազդեցությունը տնտեսական զարգացման և համաշխարհային տնտեսության մեջ ինտեգրման մեխանիզմների վրա: Այս գնահատումը պետք է կատարվի հաշվի առնելով հնարավորինս բազմազան քաղաքականություններ ներառյալ բայց ոչ սահմանափակված ֆինանսավարկային հարկային բյուջետային ապահովագրական ներառյալ սոցիալական ապահովագրություն ֆինանսական և բանկային համակարգեր գործարարական միջավայրի քաղաքականությունները:

Քաղաքականությունների նմանատիպ գնահատում պետք է մշակվի հասարակական գործընթացների և զբաղվածության համար ևս. եթե հնարավոր է հաշվի առնելով վերը նշված գործընթացների և տնտեսական աճի միջև փոխահարաբերությունները:

Արդյունքում բոլոր քաղաքականությունները պետք է բաժանվեն երկու խմբի: Առաջին խումբը ընգրկում է քաղաքականություններ որոնք չեն փոփոխվում հասարակական և տնտեսական զարգացման համապատասխան գործոնների հետ այսինքն հիմնարար քաղաքական որոշումներ որոնց մեջ փոփոխությունը կարող է ձևափոխել հասարակության հասարակական և տնտեսական կառուցվածքը շեղելով այն ազատական շուկայական տնտեսությունից կամ միջազգային կազմակերպությունների տարբեր երկրների կամ պետությունների խմբի (ՀԱԿ և Եվրոպայի խորհուրդ) նկատմամբ ստանձնած միջազգային պարտավորություններից:

4. Բաժին 3: Ապագա հնարավոր գործոնների աճը ապահովող քաղաքականությունների և Հայաստանում նրանց իրականացման հնարավորությունների վերլուծություն

Համաձայն Հայեցակարգի մեծ հավանականություն կա որ տնտեսական զարգացման ներկա ձևը որը հիմնված է արտաքին գործոններով պայմանավորված համախառն պահանջարկի ընդլայնման և ներմուծման փոխարինման վրա մոտակա տարիներին իրեն կսպառի: Այս առումով սույն բաժինը բացահայտում է այլ երկրներում արագ տնտեսական զարգացման հաջողված նախագծերը հիմնականում արագընթաց աճի և ինովացիոն տնտեսության գործոնների և մեխանիզմների տեսանկյունից: Արագընթաց աճի հաջողության և անհաջողության պատճառները և գործոնները պետք է համակարգվեն հիմնական հնարավորությունները պայմանները և սահմանափակումները պետք է բացահայտվեն և համեմատվեն Հայաստանի հետ:

Նույն մոտեցումը պետք է կիրառվի քաղաքականության վերլուծության ժամանակ: Հնարավոր քաղաքականությունների ցանկը կարող է ընդգրկել բայց սահմանափակված չէ ներքոնշվածներով՝

- ներդրումների ներգրավում (ներառյալ Անդր Ազգային Կորպորացիաների ներգրավումը) ներքին խնայողությունների մոբիլիզացում գնային և վարկային քաղաքականություն սփյուռքի գործոնի ակտիվացում (եթե կիրառելի է)
- գիտելիքներ տեխնոլոգիաներ և լիցենզավորում սերտիֆիկացում և արտոնագրում և այլն
- արդյունաբարական քաղաքականության հիմնախնդիրներ ներառյալ մասնավորապես զարգացման կլաստերների/ճյուղերի բացահայտում նրանց զարգացման նպաստումը անկման մեջ գտնվող կլաստերների/ճյուղերի բացահայտումը նրանց վերակառուցման հիմնախնդիրները
- արտահանումը խրախուսող քաղաքականություններ ներառյալ մասնավորապես ինստիտուցոնալ կառույցները գործունեության հիմնախնդիրները և ֆինանսական աջակցությունն ու օգնությունը
- հարկային և մասնավորապես հարկային արտոնությունների քաղաքականություններ հատկապես՝ տեղական և օտարերկրյա ներդրումների և ԱԱԿ-րի ներգրավման հետ կապված
- նորարամուծական տնտեսության հաստատությունների դրանց նկարագրությունը առաջացման պայմանները: Այդ կառույցների առաջացումն ու իրականացումը օժանդակող պետական քաղաքականությունը
- կրթական համակարգը որպես նորարամուծական տնտեսության հիմնական շարժիչ: Կրթական համակարգի բարեփոխման անհրաժեշտությունը և հիմնական հնարավորությունները զարգացած երկրների փորձի հիման վրա
- Հետազոտական և զարգացման կառույցները որպես համաշխարհային տնտեսության մեկ այլ շարժիչ ուժ: Հետազոտական և զարգացման կառույցների բարեփոխման անհրաժեշտությունը և նրա հիմնական սկզբունքները հիմնված զարգացած երկրների փորձի վրա
- սույն բաժնի վերլուծության արդյունքում պետք է ձևավորվեն առաջարկություններ արտահանումների վրա հիմնված աճի քաղաքականությունների և հաստատությունների ստեղծման և ձևավորման վերաբերյալ: Նորարամուծական տնտեսության կրթական հետազոտական և զարգացման հաստատությունների իրականացման համար ևս պետք է ներկայացվեն առաջարկություններ: Վերջիններս պետք է հաշվի առնեն որ 1994-2002 ազատական քաղաքականություն հիմքերը պետք է մնան անփոփոխ:

5. Բաժին 4: Աճի գործոնների և պայմանների կանխատեսում

Այս բաժինը նվիրված է աճի միջին և երկարաժամկետ հեռանկարների արտաքին և ներքին պայմանների ու գործոնների կանխատեսմանը և բաժանված է երկու մասի:
Առաջի մասը քննարկում է արտաքին և ներքին պայմանների և գործոնների կանխատեսման խնդիրներ մասնավորապես հետևյալ՝

- համաշխարհային կենտրոնների և շրջանների տնտեսական զարգացումը՝ գնահատելով տնտեսական ճգնաժամերի հավանական ազդեցությունը Հայաստանի տնտեսական զարգացման համար արժույթային կուրսի և առևտրային պայմանների փոփոխությունը հաշվի առնելով ազգային տնտեսական համակարգի ստեղծման անհրաժեշտությունը
- ԵՄ-ի տնտեսական զարգացումը մասնավորապես ընդլայնման հնարավոր տնտեսական անկման հետևանքները ԵՄ-ի դերի բարձրացումը որպես Եվրոպական պետություն Եվրո-ի հեռանկարները և Եվրոպական Կենտրոնական Բանկի դերը՝ նպատակ ունենալով կանխատեսել ԵՄ-ին Հայաստանի ապագա անդամակցությունը:
- Այն երկրների տնտեսական զարգացումը որոնք հանդիսանում են և սկզբունքորեն կարող են դառնալ Հայաստանի գլխավոր ռազմավարական գործընկերներ՝ լինի դա ներմուծման թե արտահանման տեսանկյունից և Հայաստանի հնարավոր բաժնեմասը այդ երկրների շուկաներում: Այս կանխատեսումը պետք է կատարվի հաշվի առնելով ռազմավարական նշանակություն ունեցող մատակարարողների տարբերակման անհրաժեշտությունը առանձին մատակարարներից անհարկի կախման բացառման նպատակով
- Հայաստան միջազգային ֆինանսական միջոցների հոսքերի կանխատեսում ներառյալ պաշտոնական օժանդակությունը (ՀՌՀ և Համաշխարհային բանկի քաղաքականությունների հավանական փոփոխությունները) կոնցեսիոն և առևտրային վարկերը որոնք կփոխառվեն թե՛ պետական և թե՛ մասնավոր վարկատուներից ոչ պաշտոնական փոխանցումները և վճարումները
- Սփյուռքի մասնակցության կանխատեսում (ֆինանսական հնարավորությունները ձեռներեցության մեջ ներգրավումը ներառյալ ԱԱԿ-ը հանրային ղեկավարումը պոտենցիալ ներդրումները Հայաստանում արտադրված ապրանքների սպառում և այլն)
- Աշխարհում տեխնոլոգիաների զարգացման միտումները «հիմնական ուղղությունները ավանդական և բարձր տեխնոլոգիաների շուկաները» բացահայտելով ձևավորվող նոր շուկաների այն հատվածները որոնք կարող են գրավիչ լինել Հայաստանի համար:

Երկրորդ մասը առնչվում է ներքին պայմանների և գործոնների կանխատեսման հետ ներառյալ մասնավորապես հետևյալ՝

- Մարդկային ռեսուրսների կանխատեսումը և դրա համապատասխանությունը կայուն զարգացման կարիքներին (բնակչություն զբաղվածություն ներառյալ ճյուղային բաժանումը միգրացիայի ծավալների հաշվարկում կրթական համակարգում ներգրավվածության չափերը և այլն)
- Հայաստանի բնական ռեսուրսների գնահատում հաշվի առնելով հայտնի ծավալները և համաշխարհային շուկայում գնի փոփոխությունների միտումները
- առկա ենթակառուցվածքների գնահատում և կանխատեսում (էներգիա կապի միջոցներ և տրանսպորտային համակարգ ֆիզիկական և բարոյական մաշվածություն անհրաժեշտ ֆինանսավորում և այլն)
- Մակրոտնտեսական կանխատեսում (սպառում ներառյալ մասնավոր և հանրային ծախսեր ներդրումներ հանրային մասնավոր ներքին և արտաքին ներքին խնայողություններ եկամուտներ և նրանց կառուցվածքը արտահանում ներմուծում արտաքին հաշվեկշիռ և այլն)
- Տնտեսական աճի համար անհրաժեշտ ներդրումների կանխատեսման ճանապարհով ներքին (ներքին խնայողություններ) և արտաքին (ԱՌՆՆ արտաքին փոխառություններ ոչ պաշտոնական փոխանցումներ) աղբյուրներից ֆինանսավորման կարիքների ֆինանսավորման հավանական ճեղքերի ինչպես նաև արտաքին պարտքի ծավալների կանխատեսում
- Ապրանքների արտադրության և ծառայությունների մատուցման ճյուղային կանխատեսումներ ինչպես նաև ներմուծումն և արտահանման կանխատեսումները ըստ հիմնական արպրանքների և ծառայությունների խմբերի

- Գոյություն ունեցող և հավանական զարգացման կլաստերների գործունեության կանխատեսումները հավանական անկում ապրող կլաստերների որոշում

Այս բաժնում տնտեսական մոդելների վերաբերյալ տվյալների որակից և մատչելիությունից ելնելով՝ (էկոնոմետրիկ և հավասարակշիռ ձևերը) պետք է օգտագործվեն երբ հնարավոր է ձեռք բերել պայմանների և գործոնների որակական հաշվարկներ և խուսափել տարբեր ցուցանիշների դինամիկաների միջև անհամապատասխանություններից:

Այս բաժնի արդյունքը (հատկապես ներքին գործոններին և պայմաններին վերաբերվող) պետք է համահունչ լինեն տարբեր ցուցանիշների դինամիկ արժեքների խմբին որոնք բնորոշում են աճի գործոնները և պայմանները:

6. Բաժին 5՝ Կայուն տնտեսական աճի քաղաքականությունները

Այս բաժինը ներկայացնում է քաղաքականության փոփոխության և ինստիտուցիոնալ կառուցվածքի վերաբերյալ առաջարկություններ որոնք անհրաժեշտ են տնտեսական աճի բարձր և կայուն տեմպերի հասնելու համար: Այս մասը հիմնված է Մաս 2-ում և 3-ում նշված վերլուծությունների և Մաս 4-ում ներկայացված կանխատեսումների վրա:

- Քաղաքականությունների խումբը որը չպետք է փոփոխվի՝ հաշվի առնելով նրանց հիմնարար բնույթը ազատական շուկայական տնտեսության և ԵՄ-ին միանալու չափանիշների համար: Եթե քաղաքականության ամրապնդման կարիք կա ապա պետք է ներկայացվեն ամրապնդմանն ուղղված միջոցառումներ:
- Քաղաքականությունների և հաստատությունների խումբ որը պետք է փոխել կամ ստեղծել (implement) նորը՝ արտահանման աճի բարձր տեմպեր ապահովելու ներդրումների և խնայողությունների համախմբման անհրաժեշտ քանակը օժանդակելու գործարար միջավայրի ամրապնդման համար:
- Քաղաքականությունների և հաստատությունների խումբ որը անհրաժեշտ է փոխել կամ ստեղծել նորը՝ նորարարական տնտեսության տարրերի և կառուցվածքների ներդրման համար:
- Քաղաքականությունների և հաստատությունների խումբը որը անհրաժեշտ է ամրապնդել կամ իրականացնել նորը՝ ԵՄ-ին անդամակցության չափանիշներին համապատասխանելու համար:

7. Ծրագրի հավելված 1

Ծրագրի հավելված 1-ը պետք է ներկայացնի հիմնական քաղաքականությունը և ինստիտուցիոնալ կառուցման միջոցառումները՝ նշելով իրականացման փորձնական/մոտավոր ժամկետը իրականացման համար պատասխանատու պետական և այլ մարմինները ֆինանսավորման հաշվարկները և աղբյուրները և հնարավորության դեպքում առաջարկվել միջոցառումների հակիրճ նկարագրությունը: Եթե ծրագիրը կարող է տալ միջոցառման միայն ընդհանուր նկարագրությունը ապա միջոցառումը պետք է իրականացվի միայն համապատասխան ենթածրագիր նախագծելուց/մշակելուց հետո որը ևս պետք է նշվի Հավելվածում ներառյալ հավանական ժամկետները և ֆինանսավորման հաշվարկները:

8. Ծրագրի հավելված 2

Սույն հավելվածը պետք է պարունակի ծրագրի մոնիտորինգի վերաբերյալ առաջարկություններ նրա կապերը այլ ռազմավարական զարգացման և սոցալիական ծրագրերի հետ (ԱՆՌ-Ծ MTEF ճյուղային ծրագրեր և այլ) և նորությունների մեխանիզմները՝ հիմնված մոնիտորինգի արդյունքների և այլ ծրագրերի նոր նախագծերի վրա: